

Երեւոնյա այսպէս

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՅԱՐԱՆՈՒՄ Ամենայն Յայոց Կաթողիկոսն ընդունեց

16 սեպտեմբերի «Վորլդ Վիժըն» միջազգային բարեգործական կազմակերպության պատվիրակությանը

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց «Վորլդ Վիժըն» միջազգային բարեգործական կազմակերպության Միջին Արեւելքի եւ Արեւելյան Եվրոպայի տարածաշրջանային ֆորումի մասնակիցներին՝ ուղեկցութեամբ Մայր Աթոռի Ներկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն, «Վորլդ Վիժըն» Յայաստանի հորհրդատվական խորհրդի անդամ Պարույր քին. Ավետիսյանի եւ ԵՅԽ հայաստանյան «Վլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն, «Վորլդ Վիժըն» Յայաստանի հորհրդատվական խորհրդի ատենապետ պրն Կարեն Նազարյանի:

«Վորլդ Վիժըն» միջազգային բարեգործական կազմակերպության Միջին Արեւելքի եւ Արեւելյան Եվրոպայի տարածաշրջանային ղեկավար պրն Բենգ Յեոնն Ամենայն Յայոց Կաթողիկոսին ներկայացրեց 21 երկ-

նշեց, որ այս տաղավար տոնին եկեղեցու յուրաքանչյուր անդամ անդրադարձ է կատարում Քրիստոսի փրկագործությանը: Այս առիթով Ամենայն Յայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ ներկաները, մասնակցելով ս. Պատարագին, կհամակցեն աղոթքով եւ հաղորդ կդառնան օրվա խորհրդին:

Վեհափառ Յայրապետն իր գնահատանքը բերեց կազմակերպության անդամներին իրենց նվիրյալ եւ օգտաշատ ծառայության համար, որն իր բարի պտուղներն է տալիս թէ Յայաստանում եւ թէ Յայաստանից դուրս: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց նաեւ Յայոց եկեղեցու եւ «Վորլդ Վիժըն»-ի միջեւ կրթական եւ սոցիալական ոլորտներում ձեւավորված սերտ գործակցության առիթով: Յայոց Յովվապետը նաեւ խոսեց «Վորլդ Վիժըն»-ի աշխատանքներում ընդգրկված Պարույր քին. Ավետիսյանի եւ պրն Կարեն Նազարյանի նվիրյալ ծա-



մաեւ շարունակական աջակցությունը Գեւորգյան ճեմարանին եւ ԵՊՅ աստվածաբանության ֆակուլտետին: Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը հայտնեց միության նախագահին եւ անդամներին՝ Յայաստանում եւ Արցախում իրականացվող սոցիալական եւ կրթական բարեգործական ծրագրերի համար: Գերմանահայ գործարարները, Ամենայն

Յայոց Կաթողիկոսին հանգամանորեն ներկայացնելով իրենց ծրագրերը, հավաստիացրեցին, որ մշտապես կանգնած են լինելու Մայր Աթոռի, հայրենիքի եւ հայ ժողովրդի կողքին: Վերջում Նորին Սրբությունը հյուրերին մաղթեց Աստուծո օգնականությունն ու պահպանությունը իրենց աստվածահաճ առաքելության իրականացման գործում:



րից Յայաստան ժամանած պաշտոնական պատվիրակության շուրջ 40 անդամներին, որոնք հաջորդող օրերին Երեւանում գումարելու էին իրենց հերթական ֆորումը՝ շնորհակալություն հայտնելով Մայր Աթոռում Յայոց Յովվապետի հետ հանդիպելու եւ ս. Պատարագին մասնակցելու համար:

Այնուհետեւ հյուրերին իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Գարեգին Երկրորդ Յայրապետը: Նորին Սրբությունը, ներկայացնելով խաչվերացի խորհուրդը,

ռայության մասին: Զանդիպման ավարտին ներկաներն իրենց երախտագիտությունը հայտնեցին Ամենայն Յայոց Կաթողիկոսին՝ շեղմ հյուրընկալության եւ Յայրապետական օրհնությանն արժանանալու համար:

Զանդիպմանը ներկա էին նաեւ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Զովհաննիսյանն ու Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Զամբարծումյանը:

19 սեպտեմբերի Գերմանիայի հայ գործարարների միության անդամներին

Ամենայն Յայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում ընդունեց Գերմանիայի հայ գործարարների միության անդամներին՝ գլխավորությամբ միության նախագահ Սուրադ Աջուզի եւ ուղեկցությամբ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ եւ ԵՊՅ աստվածաբանության ֆակուլտետի ղեկան Անուշավան Եպս ժամկոչյանի եւ Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Սերովբե վրդ. Իսախանյանի:

Գերմանիայի հայոց թեմի առաջնորդը,

Նորին Սրբությանը ներկայացնելով միության անդամներին եւ նրանց բարեսիրական գործունեությունը, հայցեց Ամենայն Յայոց Յայրապետի օրհնությունը:

Իր հերթին Ամենայն Յայոց Կաթողիկոսն արձանագրեց միության ակտիվ մասնակցությունն ու ներդրումը Գերմանիայի հայ համայնքի ազգային-հոգեւոր կյանքի զորացման գործում: Վեհափառ Յայրապետը փաստեց միության կողմից Մայր Աթոռին ցուցաբերվող գորակցությունը, ինչպես

20 սեպտեմբերի

Լուս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի ղեկավարին

Ամենայն Յայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի ղեկավար, կենսաբան, ակադեմիկոս Ջին Բլոքին՝ ուղեկցությամբ համալսարանի Դեյվիդ Գեֆեմի անվան բժշկական քոլեջի համալսարանի ղեկավար Դոկտոր Էրիկ Եւրալյանի:

Նորին Սրբությունը ողջունեց նրանց այցը, որի նպատակն է մոր գործակցություն ձեւավորել Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի եւ Յայաստանի բարձրագույն կրթական հաստատությունների միջեւ:

Վեհափառ Յայրապետը գնահատանքով անդրադարձավ համալսարանի կողմից այդ ուղղությամբ արդեն իսկ գործադրված ջանքերին՝ մասնավորապես Յայաստանի Ամերիկյան համալսարանի կայացման գործում ունեցած կարեւոր ներդրմանը: Ամենայն Յայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ կրթական ասպարեզում երիտասարդության համար մոր հնարավորությունների ստեղծումը կարող է լուրջ հիմք դառնալ արտագաղթի նվազեցման համար: Զանդիպմանը ներկայացրեց Յայոց Կաթողիկոսն իր երախտագիտությունը հայտնեց պրն Ջին Բլոքին՝ Յայաստանում եւ Միացյալ Նահանգներում այս ուղղությամբ ձեռնարկվող քայլերի համար:

Վեհափառ Յայրապետն ուրախությամբ փաստեց, որ ձեւավորվող գործակցության համար խթան է սերտ բարեկամությունը ԱՄՆ հայ համայնքի հետ: Ամենայն Յայոց



Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նաեւ դոկտոր Էրիկ Եւրալյանին՝ այս հարցում ունեցած կարեւոր դերակատարության, ինչպես նաեւ ԱՄՆ-ի հայ համայնքի ազգային-հոգեւոր կյանքի զորացման գործում ունեցած ակտիվ մասնակցության եւ ներդրման համար:

Իր հերթին Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի ղեկավարը մշտեց, որ առաջին անգամ է այցելում Յայաստան եւ իր ծանոթությունը հայ ժողովրդի հետ մինչ այս եղել է ամերիկահայ համայնքի միջոցով: Պրն Բլոքը մշտեց, որ պատկառելի հայ համայնք կա նաեւ Կալիֆոռնիայի համալսարանում, անդրադարձավ ապագա գործակցության ծրագրերին:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց Հայաստանի Խորհրդարանի 100-ամյակին նվիրված միջոցառմանը

Սեպտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ներկա գտնվեց Հայաստանի Խորհրդարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված հորեյանական միջոցառմանը:

Միջոցառման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ուղղեց մասնակից պատգամավորներին եւ Հայաստանի ու Արցախի պետական այրերին:

«Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության, Մեծարգո Վարչապետ, Մեծարգո Նախագահ Արցախի Հանրապետության, Մեծարգո Աժ Նախագահ, Հարգարժան պատգամավորներ, պետական այրեր, Սիրելի ներկաներ,

Ուրախ եմք այսօր միասնաբար մասնակցելու ՀՀ Խորհրդարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառմանը եւ բերելու ձեզ եւ Մեր ողջ բարեպաշտ ժողովրդին հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Մեկ դար առաջ՝ մեր պատմության վճռորոշ ժամանակաշրջանում, ազգիս զավակների տեսիլքով, վճռակամությամբ եւ հերոսական պայքարով վերականգնվեց հայկական անկախ պետականությունը:

Երջանկահիշատակ Գեւորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի կոչով Արարատյան դաշտավայրի եկեղեցիներում դողաճող զանգերի զորությունն էր, որ ոգեշնչեց ու գոտեպնդեց մեր ժողովրդին հաղթանակով պսակելու հայրենիքի պաշտպանության մարտերը եւ ամուր կանգնելու մեր հողի վրա: Արդարեւ, անցյալ դարասկիզբը եղավ փորձության, բայց եւ հերո-

սության ու անօրինակ խիզախ իրագործումների ժամանակաշրջան, երբ մեր ժողովուրդը, քաղաքական այրերը եւ Հայ եկեղեցին լծվեցին անկախ պետականության կերտման նվիրական գործին: Հիմնվեց առաջին Խորհրդարանը, քա-

ղաքական ու հասարակական մեր գործիչների համար:

Սիրելիներ, «Օրենքի իմացությունը մտքի բարիք է», - ասում է Սուրբ Գիրքը (Առակ. 13.5)՝ կարեւորելով օրենքի դերը հասարակությունների կյանքում:



լեր ձեռնարկվեցին պետությունը գորացնելու, քաղաքացիական հասարակություն ձեւավորելու ուղղությամբ, ջանքեր գործարկվեցին ապահովելու խաղաղ ու անվտանգ կյանքը մեր ժողովրդի: Հայաստանի առաջին Հանրապետության երախտավորների ազգային մտածողությունը, մեր դարավոր արժեքներին հավատարմությունը, հայրենամիտությունը եւ պետության գորացման համար ջանքերը մեկտեղելու բացառիկ նախանձախնդրությունը օրինակ են եւ այսօր՝ ազգային,

Հայաստանի Հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Ազգային ժողովի առաքելությունը բարիք արարելն է մեր պետության հզորացման, հայրենական կյանքի շենացման համար: Մեր ժողովրդի ակնկալիքն է, որ Խորհրդարանը լինի արտահայտող ժողովրդի սպասումների, մտահոգությունների եւ տեսիլքների, լինի մանրակերտը մեր հասարակության: Ազգային ժողովին ներկայումս նույնպես բաժին է ընկել մեծ պատասխանատվություն՝ օրենսդրական

արդյունավոր գործունեությամբ նպաստել պետական-հասարակական կյանքի առաջընթացին: Օրենքի առջեւ բոլորի հավասարության, արդարության, հասարակական համերաշխության ժողովրդավարական սկզբունքներն իրագործելով, միմյանց հանդեպ քրիստոնեական սիրո ոգով ու ավետարանական պատգամներով է, որ կարողանալու ենք բարի արդյունքներ բերել մեր հայրենիքին ու ժողովրդին:

Մեծարգո պատգամավորներ, ձեր քաղաքական դիրքորոշումների ու հայացքների տարբերություններով հանդերձ՝ կոչված եք գործելու հանուն նույն նպատակի՝ հայրենիքի զորացման, պետականության ամրապնդման, մեր ինքնության անխաթար պահպանության եւ մեր ժողովրդի բարօրության ու առաջընթացի համար: Մեր ազգային միասնությունը ապահովելը եւ մեր ժողովրդի եռանդն ու կարողությունները դեպի հայրենիքի շենացում ու զարգացում առաջնորդելը այսօր բոլորիս ամենօրյա աշխատանքը պետք է լինի, բոլորիս բարձր պատասխանատվությունը: Այսպես պիտի կարողանանք հաղթահարել մեր երկրի առջեւ ծառայած մարտահրավերներն ու խնդիրները, պաշտպանել մեր հայրենյաց սահմանները, մեր կյանքի խաղաղությունն ու անվտանգությունը:

Հայրապետական Մեր հորդորն է ձեզ, որ առ հայրենիքը սիրով եւ ազգամիտությամբ շարունակեք արդյունավորել ձեր ծառայությունը մեր պետությանը եւ ժողովրդին՝ բարի գործակցությամբ ձեռքբերումներ արձանագրելով:

Աղոթում եմք, որ Ամենակարող Աստված խաղաղության մեջ պահի մեր հայրենիքը եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքո հավատքի, սիրո, միաբանության մեջ պահպանի մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս՝ այսօր եւ հավիտյանս. ամեն»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱՍՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Անկախության տոնի առիթով ողջույն ենք հղում եւ հայրապետական Մեր օրհնությունը բերում մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

Անկախության տոնի խորհրդով արժեւորում ենք հայրենի պետականությունը վերակերտելու մեր ժողովրդի պանծալի ուղին, որն անցել ենք հայրենիքում ազատ կյանք կառուցելու արդար հույսերով, հաղթահարելով բազում դժվարություններ եւ կրելով մեծ զոհողություններ: Մեր ձեռքբերումները եւ վերընթաց ուղին այսօր քաջալերանք են մեզ՝ հայրենիքով միասնական եւ համերաշխ ոգով իրագործելու մեր բոլոր իղձերը, արիությանը դիմագրավելու ներկա մարտահրավերները եւ նվիրումով ու սիրով շենացնելու մեր երկիրն ու ազգային կյանքը:

Այս տեսլականով մաղթում ենք մեր ժողովրդին հայրենյաց սիրո նորոգված ոգի, գործելու նորոգված եռանդ ու պատասխանատվություն եւ նոր հաղթանակներ:

Աղոթք ենք բարձրացնում երկինք, որ Տերը Ամենախնամ Իր Սուրբ Աջի ներքո խաղաղության մեջ պահպանի հայրենի մեր երկիրը, հավատքով գորացյալ ու շնորհով լեցուն պահի մեր ժողովրդին՝ մարմնավորելու ազգային գարթոնքի իր բոլոր իղձերն ու տեսիլքները:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհները եւ խաղաղությունը թող լինեն մեզ հետ եւ բոլորի. ամեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Լուս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի ռեկտորին

Սկիզբը՝ էջ 1

Զրույցի ընթացքում խոսվեց հայ ժողովրդի մշակույթի եւ ազգային ինքնության պահպանման գործում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բացառիկ դերակատարության, երկրի եւ եկեղեցու առջեւ ծառայած ժամանակակից մար-

տահրավերների մասին: Անդրադարձ կատարվեց նաեւ Հայոց եկեղեցու առաքելությանը նվիրյալ եւ հավատավոր հայորդիների բերած զորակցությանը եւ Մայր Աթոռի կողմից իրականացվող կրթական ու սոցիալական ծրագրերին:

Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության պատվիրակությանը՝ գլխավորությամբ ընկերակցության գործադիր տնօրեն Զավեն Խանջյանի:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությանը՝ ազգի միասնականության գորացման գործում: Ընդգծվեց, որ, անկախ տարբեր պայմաններից եւ կրոնական հայացքներից, աշխարհասփյուռ հայորդիների հոգում եւ գիտակցության մեջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մշտապես ընկալվել է իբրեւ երաշխավոր ազգային ինքնության պահպանման եւ հարատեւման:

Հանդիպմանը խոսվեց նաեւ հոգեւոր զարթոնքի եւ Հայաստանում ու Սփյուռքի հայ համայնքներում երիտասարդության հետ տարվող աշխատանքների մասին:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԵՏՐՈՂՈՒՄԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԶՈՒՅԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՅՄԱՆԸ

Սեպտեմբերի 24, 2018 թ.

Հարգելի նախագահ Վայս, Հարգելի վարչապետ Փաշինյան, Քույրեր եւ եղբայրներ,

Այսօր մեր սրտերը լցված են ուրախությամբ, քանի որ ակամատեսն ենք աշխարհի ամենահայտնի թանգարաններից մեկում՝ «Մետրոպոլիտան» արվեստի թանգարանում «Հայաստան» անունը կրող ցուցահանդեսի բացմանը:

Այս հիմնադրությունը մշակույթի համընդհանուր լեզվով ներկայացնելու է, թե ովքեր ենք մենք՝ հայերս, եւ որտեղից ենք գալիս: Այն մշակավորում է 14 դարերի ընթացքում մեր ազգի մշակութային ձեռքբերումները, հոգեւոր արժեքները եւ առաջիկա չորս ամիսների ընթացքում բազմաթիվ այցելուների պատմելու է առ Աստված մեր ժողովրդի հավատքի, մեր քրիստոնեական յուրահատուկ ինքնության եւ հնագույն պատմության մասին:

Այստեղ ցուցադրված մշակութային նմուշ-



րել ու եզակի բազմազանություն է ստեղծել քրիստոնեությանը ներշնչված մեր մշակութային կյանքում՝ հարստացնելով մեր ինքնությունը եւ միաժամանակ պահպանելով մեր իրական ազգային առանձնահատկությունները:

Մեր պատմության ընթացքում ճաշակել ենք մեր աշխարհագրական դիրքի առավելություններն ու փորձությունները: Ստեղծել ենք սքանչելի գեղեցկություն ունեցող նկարազարդ Ավետարաններ ու մատյաններ, փորագրել ենք եզակի հմայք ունեցող խաչքարեր եւ աստվածաշնչյան մեր երկրի ողջ տարածքում կառուցել ենք քրիստոնեական տաճարներ ու վանքեր՝ 4-րդ դարից ի վեր: Մեր հարեւան տերությունների կողմից արյունալի ներխուժումների ժամանակներում էլ ստիպված ենք եղել զենք վերցնել եւ առ Աստված ապավինությանը պաշտպանել մեր կյանքն ու ինքնությունը մեզ ոչնչացնել ցանկացողներից: Մենք պաշտպանել ու պահպանել ենք այն ամենը, ինչ մեզ բնորոշում է իբրեւ ազգ ու ժողովուրդ՝ մեր հայրենիքը, մեր լեզուն, մեր եկեղեցիները, մեր գիրքը, սրբությունները եւ հավատքը: Մեր կրոնը, մեր ազգային եկեղեցին է մեզ օգնել ապահովել մեր ազգային զարգացման անընդհատությունն այն դժնդակ տարիներին, երբ զուրկ ենք եղել պետականությունից:

Եվ այսօր այստեղ ենք. ժամանակին համպատասխան մեր կյանքն ու ինքնությունը մեզ ոչնչացնել ցանկացողներից: Մենք պաշտպանել ու պահպանել ենք այն ամենը, ինչ մեզ բնորոշում է իբրեւ ազգ ու ժողովուրդ՝ մեր հայրենիքը, մեր լեզուն, մեր եկեղեցիները, մեր գիրքը, սրբությունները եւ հավատքը: Մեր կրոնը, մեր ազգային եկեղեցին է մեզ օգնել ապահովել մեր ազգային զարգացման անընդհատությունն այն դժնդակ տարիներին, երբ զուրկ ենք եղել պետականությունից: Եվ այսօր այստեղ ենք. ժամանակին համ-

ընթաց ապրող ազգ, որը հպարտորեն ցուցադրում է իր աստվածատուր ազգային մշակույթի հարստությունը՝ Նյու Յորքի Մետրոպոլիտան թանգարանում՝ արժանավոր տեղ գրադեցնելով աշխարհի մեծ ժողովուրդների կողքին:

Այս բոլոր ցուցանմուշները, որ հպարտորեն ներկայացնում ենք, վեր են հանում այն, ինչը մենք փայփայում ենք, եւ ինչը պատմում է մեր ճակատագրի մասին: Այս ամենը նաեւ բացարձակ հստակությամբ ներկայացնում է, թե ինչ ենք ստեղծել մենք՝ հայերս, համաշխարհային մշակութային ժառանգության մեջ:

Այս ցուցադրությունը թեպետ սահմանափակվում է 4-18-րդ դարերով, այն նաեւ ժամանակակից Հայաստանի մասին է, քանի որ հնարավորություն է ընձեռելու այցելուներին ծանոթանալ եւ սովորել մեր ժողովրդի մասին՝ աշխարհի քարտեզի վրա մտովի սավառնելով մեր Հանրապետությունում եւ պատմական հայրենիքում:

Սիրելի ներկաներ, այս օրինյալ նախաձեռնությունը հնարավոր է դարձել ոչ միայն հայկական եւ այլ աշխարհասփյուռ հաստատությունների կողմից ներկայացված ցուցանմուշների, ինչպես նաեւ մեր բարերարների առատաձեռնությամբ, որոնց բերում ենք Մեր գնահատանքը, բայց նաեւ, կարելու է մշել, սնուցվել է դուրս. Հեղինակը անսահման սիրով եւ հոգատարությամբ:

Տարիներ առաջ ծնված այս գաղափարը

գաղափար էլ կմնար, եթե չլիներ աշխարհին մեր արվեստը եւ ինքնությունը ցուցադրելու դուրս. Էվանսի՝ տարիների նվիրումով ու ավյունով կուտակված ջանասիրությամբ:


Հիրավի, արվեստի միջոցով մենք կարող ենք դառնում առնչվելու այս աշխարհում Աստուծո առաջակամ առաքելությանը: Այս համոզումն է, որ մխիթարություն եւ խթանող ուժ է համդիսացել մեր նախնյաց համար Հայոց աշխարհում, ովքեր արարել եւ դարերի խորքից մեզ են ավանդել արվեստի այս հիասքանչ մատուցները: Մենք գոհություն ենք հայտնում Ամենակալ Աստծուն, որ մեզանում ապրում են արվեստի ճշմարիտ ջահակիրներ, ինչպիսիք են տիկին Էվանսը, Մետրոպոլիտան թանգարանի ողջ անձնակազմը՝ առաջնորդությամբ պարոն Վայսի եւ այն բոլորի, ովքեր ներգրավված են եղել այս սքանչելի նախաձեռնության կյանքի կոչմանը:

Այսու՝ մեր բարեպաշտ ժողովրդի մեծ սերունու երախտագիտությունը հայտնելով՝ ցանկանում ենք հայ ժողովրդի իսկական բարեկամ



ները եւ քրիստոնեական մատուցները, հիրավի, բնական ընկալում են ձեւավորելու այն մասին, թե դարերի ընթացքում ինչ արժեքներ է ստեղծել քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին ժողովուրդը եւ ինչն է առավել շատ կարեւորել ու փայփայել:

Դարերի ընթացքում մեր ժողովուրդը ապրել է միջազգային առնչությունների խաչադիմերում եւ Մետաքսի ճանապարհի երկայնքով մասնակցություն ունեցել առեւտրային լայն փոխհարաբերություններում, ինչն էլ խորաց-



դուրս. Հեղինակը անսահման սիրով եւ հոգատարությամբ:

Սիրելի ներկաներ, այս օրինյալ նախաձեռնությունը հնարավոր է դարձել ոչ միայն հայկական եւ այլ աշխարհասփյուռ հաստատությունների կողմից ներկայացված ցուցանմուշների, ինչպես նաեւ մեր բարերարների առատաձեռնությամբ, որոնց բերում ենք Մեր գնահատանքը, բայց նաեւ, կարելու է մշել, սնուցվել է դուրս. Հեղինակը անսահման սիրով եւ հոգատարությամբ:

Տարիներ առաջ ծնված այս գաղափարը հրատված էր: Յուրաքանչյուրը՝ «Սուրբ Սահակ Սուրբ Մեսրոպ» շքանշանը: Թող Աստված օրհնի ամենքին՝ Հայաստանի Հանրապետության քաջազնիվ բարեկամներին ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի բոլոր գավակներին:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ԱՄՏԾՈ ՏՈՒՆԸ՝ ԲԱՐԵՂԵՆ ԿԱՌՈՒՅՑ


«Ինչպես անձրեւն է սնուցում սերմերը, այնպես եւ եկեղեցական արարողություններին մասնակցելն է ամրացնում հոգին շնորհի մեջ»:

Եփրեմ Ասորի

Մեր նախորդ հոդվածում (տես «Աստծո տունը», օգոստոս Ա, թիվ 15 (515), 2018) խոսել ենք «Եկեղեցի» բառի՝ տարբեր իմաստներով ընկալումների մասին: Անդրադարձել ենք նաեւ հունարեն «էկկղոսիա» եզրույթին:

Հունահռոմեական աշխարհում «էկկղոսիա»-ն սկզբնապես բացարձակ աշխարհիկ նշանակություն է իմաստ է ունեցել. այն ազատ քաղաքացիների ժողովն էր, որն ինչ-որ իմաստով քաղաքական ուժ էր, եւ իր կամքն ու ընտրությունն արտահայտելու իրավունք ուներ: Հունահռոմեական «էկկղոսիա»-ն սկզբնապես շրջանում կրոնական բովանդակություն չուներ: Եզրույթն այս իմաստով հանդիպում է դեռեւս Ք. ծ. ա. Ե դարից սկսյալ Հերոդոտոսի, Քսենոփոնի, Պլատոնի եւ Էվրիպիդեսի երկերում: Ուշագրավ է, որ Գործք առաքելոցում բառը կիրառվել է «հեթանոսների ժողով» իմաստով (ԺԺ 32, 39, 41):

Քրիստոնեության տարածումից հետո «էկկղոսիա»-ն այլ՝ նոր բովանդակություն է



ստանում եւ մեկնվում է որպես «քրիստոնյա հավատացյալների հոգեւոր հավաք, ժողով»: Այսինքն՝ «Եկեղեցի», հոգեւոր իմաստով, հավատացյալների համայնքն է, որի նպատակը Աստծո խոսքը լսելն ու քարոզելն է:

Հին Կտակարանը վկայում է, որ մինչ քրիստոնեության տարածումը՝ Տիրոջ տունը հրեական Տաճարն էր: Քրիստոսն Իր երկրային կյանքի ընթացքում քարոզում էր Աստծո

խոսքը, խոնարհության եւ ներողամտության կենդանի օրինակ ցույց տալիս մահկանացու մարդուն: Աստծո Որդու հարությունից եւ համբարձումից հետո Նրա աշակերտները շարունակեցին տարածել իրենց Ուսուցչի վարդապետությունը...

Քրիստոնեության հոգեւոր ու բարոյական արժեքաբանարգը լույս սփռեց վաղուց արդեն բարոյաբույժ եւ խավարի մեջ խարխափող հեթանոսական աշխարհի վրա: Մեր թվարկության Ա-Գ դարերում Հռոմեական կայսրությունում, ապա նաեւ հարակից երկրներում քրիստոնյաները ենթարկվում են դաժան եւ անմարդկային հալածանքների: Վաղքրիստոնեական համայնքների անդամները թաքնվում էին անձավներում, անտառներում, նկուղներում, փորձում հնարավորինս մնալ աննկատ: Նրանք երեկոյան ժամերին հավաքվում էին որեւէ գաղտնի վայրում, լսում Տիրոջ խոսքը, աղոթում. այսինքն՝ Եկեղեցին՝ հոգեւոր հա-

մայնքը, արդեն իսկ ձեւավորվում էր: Սակայն արյունալի հալածանքների պայմաններում, բնականաբար, քրիստոնեական եկեղեցիներ եւ առհասարակ հոգեւոր շինություններ դեռեւս չէին կառուցվում: Այս շրջանում քրիստոնյա հազարավոր մարտիրոսներ ու նահատակներ թագադրվեցին սրբալույս պսակով՝ վկայելով առ Տերն ունեցած իրենց հավատի անսասանությունը:

Հակաքրիստոնեական հալածանքները, տարբեր ուժգնությամբ, շարունակվում են նաեւ հեթանոսական Հայոց աշխարհում մինչեւ 301 թ.՝ քրիստոնեության պետականորեն ընդունումը, իսկ հոգեւոր ու բարոյական ճգնաժամում հայտնված Հռոմեական կայսրությունում՝ 313 թ.՝ Միլանի էդիկտի (հրովարտակի) հրապարակումը: Քրիստոնեության տարածումից հետո, ինչպես վկայում են պատմական սկզբնաղբյուրները, հեթանոսական կռապաշտարաններն ու զոհասեղանները հիմնականում կործանվում են, եւ դրանց տեղում կառուցվում են քրիստոնեական մատուցներ ու եկեղեցիներ, կանգնեցվում են փայտաշեն խաչեր: Սա վերաբերում է նաեւ Հայոց աշխարհին, ինչը հաստատվում է Ազգաբնագրի «Պատմություն Հայոց»-ով:

Շարունակությունը՝ էջ 4

Ստալինյան բռնաճնշումները եւ հայ գրողների մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը

1933-1953 թթ. հայ գրողների, գրական գործիչների կյանքն ու ստեղծագործությունն անցան ստալինյան քաղաքական բռնաճնշումների պայմաններում: Ամեն ինչ սկսվեց խիստ գրաքննությամբ, ինչի հետևանքով արգելվեցին գրքեր, նախնական հարցաքննությունների ենթարկվեցին առանձին գրողներ: Մամուլում եւ ժողովներում միջանց դեմ ուղղվեցին քաղաքական մեղադրանքներ, եւ սկսվեցին ձերբակալությունները: Այս տեսակետից առանձնահատուկ է 1937 թ. ապրիլի 17-21-ին գումարված հայ գրողների ընդհանուր ժողովը, ուր բոլորը խոսում էին բոլորի դեմ: Եվ, ասենք, Հրաչյա Քոչարի մեղադրանքներն այսպիսին էին. «Վաղարշակ Նորենցի մացիոնայիզմը հասել է այնտեղ, որ իր նորածին որդու անունը դրել է Սասուն՝ երազելով վերադառնալ այդ երկիր», «Եղիշե Չարենցը քար է՝ ընկած մեր գրականության ճանապարհին, ինչքան շուտ դեմ նետեց այդ քարը, այնքան մեր ճանապարհն ավելի բաց ու ազատ կլինի»...

Քաղաքական բռնությունը՝ որպես երկիրը հնազանդության մեջ պահելու ղեկավարման ձև, բոլշևիկները որդեգրեցին սկզբից եւեթ՝ անմիջապես հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Դա սկսվեց քաղաքացիական կռիվներով, հետո ուղղվեց բոլշևիկների պիտակավորած «դասակարգային թշնամու» դեմ, որոնց մեջ էին քաղաքի եւ գյուղի ունեւոր խավի ներկայացուցիչները, հոգեւորականությունը, մախկին զինվորականությունը՝ հատկապես սպայական կազմը, մախկինում այլ կուսակցությունների անդամագրվածները, հին մտավորականությունը, անհնազանդները:

Հեղաշրջումով սկսված քաղաքական բռնությունների այս ալիքը շարունակվեց եւ նոր ձեւ ու բովանդակություն ստացավ Ստալինի իշխանության տարիներին (1924-1953): Ստալինյան բռնությունների զագաթնակետը 1937 թվականն է: Անցյալ տարի լրացավ պետական գործունեության աստիճանի հասցված այդ ոճրագործու-

թյան 80-րդ տարին: Ստալինյան բռնությունների ամբողջ համակազմը մարդկության դեմ գործված հանցանք է, որը պետք է գիտակցվի լրիվ ընդգրկումով, մանրամասնորի հարացուցյով եւ դատապարտվի:

Հայ ժողովրդի մնացորդները նոր-նոր էին փրկվել թուրքական եղեռնից, երբ Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո ընկան բոլշևիկյան քաղաքական հալածանքների շուրջակալի մեջ: Հարավից թուրքիան էր, հյուսիսից՝ Ռուսաստանը, որ ձեռք ձեռքի տված ուզում էին բնաջնջել հայ ժողովրդին: Չմոռանանք Քեմալ Աթաթուրքը - Լենինը քաղաքական եւ ռազմական դաշինքը, որ ամեն ինչ ուղղեց եւ Հայաստանի առաջին Հանրապետության, եւ նորաստեղծ Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության դեմ:

Հայաստանը տոկոսա՝ կորցնելով տարածքներ եւ զոհ տալով իր զավակներին: Եթե պետական քաղաքականության վերածված թուրքական 30-ամյա ցեղասպանություն (1894-1924) խորհրդանշական տարեթիվը համարում ենք 1915 թվականի ապրիլի 24-ը՝ Պոլսում եւ մյուս քաղաքներում հայ մտավորականության ձերբակալության օրը, ապա ստալինյան բռնությունների խորհրդանշական օրը 1936 թվականի օգոստոսի 9-ն է: Այնտեղ թուրքական եղեռնն էր, այստեղ՝ խորհրդային:

Մենք հստակորեն պետք է գիտակցենք, որ 1936 թվականի օգոստոսի 9-ը հայ ժողովրդի համար նույնն է, ինչ 1915 թվականի ապրիլի 24-ը՝ որպես հայ գրողների, ընդհանրապես մտավորականության, մաեւ պետական ու կուսակցական գործիչների ընդհանուր ձերբակալության օր: 1915-ին թուրքական հալածանքներն էին, որոնք ավարտվեցին հայ ժողովրդի ազգային ցեղասպանությամբ, 1936-ից սաստկացած խորհրդային բռնություններն էին, որոնք ընդգրկեցին ազգաբնակչության բոլոր շերտերը, բազմահազար բնակչության կյանք արժեցան՝ այս անգամ որպես գաղափարական ցեղասպանություն:

1920-1953 թթ. ՀԽՍՀ-ից ձերբակալվածների, գնդակահարվածների եւ քստրվածների թիվը հասնում է 56.000-ի, 1949-ին ՀԽՍՀ-ից քստրված հայերի թիվը 13000 է, ամբողջ ՀԽՍՀ-ից՝ 16000: Նյութերն անփոփված են 19359 դատական գործերում, որ միասին կազմում է 40000 հատոր:

1946-1948 թթ. հայրենադարձված 89500 հայերից 1000-ին ներկայացվեց քաղաքական մեղադրանք, ինչին հետեւեց նրանց քստրը կամ Ալթայի, կամ Կրասնոյարսկի երկրամասեր:

Թուրքական ցեղասպանության 1,5 միլիոնի դիմաց սրանք, իհարկե, փոքր թվեր են, բայց չմոռանանք՝ մախ թվաքանակով կրճատվել էր մաեւ հայ ժողովուրդը, եւ ապա ամբողջ ՀԽՍՀ-ի բազմազգ բնակչության ընդգրկումով այդ թիվն անցնում է տասնյակ միլիոններից:

Թերթենք պատմության պահոցների էջերը: Ձերբակալությունների զագաթնակետը 1936 թվականն էր, գնդակահարությունների՝ 1937-1938 թվականները: Ըստ վիճակագրության՝ 1937 թ. հունիս - 1938 թ. հուլիս ամիսներին՝ 13 ամսվա ընթացքում, յուրաքանչյուր 57 վայրկյանը մեկ գնդակահարվել է մեկ մարդ: Պատկերն այս է՝ մեկ օրում 1516 գնդակահարություն, մեկ ամսում՝ 46996, մեկ տարում՝ 553340, 13 ամսում՝ 600236:

Մեկ այլ տվյալ հուշում է, որ քստրվածների միայն 5 տոկոսն է կենդանի մնացել ու ետ վերադարձել:

Միայն գրական ոլորտից Հայաստանում ստալինյան քաղաքական բռնությունների է ենթարկվել շուրջ 70 մարդ, ցուցակը կազմել են: Այդ 70-ից մեկն Ալսեյ Բակունցն է, մյուսը՝ Եղիշե Չարենցը:

Բակունցը 1936 թվականի մայիս-հունիս-հուլիս ամիսներին Մոսկվայում Համո Բեկնազարյանի հետ նկարահանման էր մախսպատրաստում «Անագեզուր» շարժանկարի բեմադրը, երբ օգոստոսի սկզբին կանչեցին Երեւան, հարցաքննեցին, մե-



ղադրեցին, կուսակցությունից հեռացրեցին ու ձերբակալեցին: Բակունցին խմբակային գործունեության մեղադրանք ներկայացվեց (մեղադրական գործ 4131, ֆոնդ 3036, 8 հատորով, 384 վավերագիր):

Այս խմբի մեջ էր հայտնի կուսակցական գործիչ, տարբեր տարիների՝ լուսավորության ժողկոմ, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, համալսարանում տնտեսագիտության դասախոս, մախսպատեւոլո «Հայկական հանրագիտարանի» գիտական խորհրդի անդամ Ներսիկ Ստեփանյանը: Խումբը նրա անունով էլ կոչվում էր «Ստեփանյանի հանցավոր խումբ»:

Այստեղ էր մաեւ այդ տարիների ՀԳՄ առաջին քարտուղար, դարձյալ կուսակցական գործիչ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը:

Դատավարության ընթացքում հղիվում են ժամանակի գրական-մշակութային մշակավոր շատ գործիչների անուններ:

Շարունակությունը՝ էջ 6



Սկիզբը՝ էջ 3
Վաղբրիստոնեական աշխարհում աստիճանաբար հաստատվում է մաեւ մարտիրոսների ու սրբերի մախատակության վայրերում փոքրիկ մատուռների, հետագայում՝ եկեղեցիների կառուցման ավանդույթը: Այս առնչությամբ հարցեր են ծագում՝ արդյո՞ք եկեղեցու՝ քարեղեն կառույցի անհրաժեշտությունը կար, կարող են հավատացյալների բոլոր հավաքատեղիները Աստծո տուն համարվել (հողվածում սկզբունքորեն «Եկեղեցի» բառը գրել ենք մեծատառով՝ Քրիստոսի խորհրդական մարմին իմաստով գործածելիս, փոքրատառով՝ քարեղեն կառույց իմաստով կիրառման դեպքում)...

Նկարագրում են շինարարության ողջ ընթացքը (*Ա Մնաց. ԻԸ, ԻԹ զլ., Գ Թագ. Ե, Զ զլ., Բ Մնաց. Բ 1-18*), ներքին կախվորումը (*Գ Թագ. Զ 14-37, Բ Մնաց. Գ 8-14*), ավազանի պատրաստումը (*Ա Թագ. Ե 23-26*), ուխտի տապանակի եւ սպասքի տեղադրումը (*Բ Մնաց. Ե 4-10*)... Այսինքն՝ Հայրն է պատվիրում Իր տունը տարբերակել մյուս կառույցներից: Հինկտակարանյան տաճարը առանձնանում է իր կառուցվածքով, սրբությամբ, այնտեղ կատարվող երկրպագությամբ ու ծիսապաշտամունքային արարողություններով:

Ի տարբերություն Հին Կտակարանի՝ Նոր Կտակարանում Քրիստոսը որոշակի իրահանգ չի տալիս եկեղեցու՝ քարեղեն կառույցի վերաբերյալ: Նոր Ուխտում առավելապես քննարկվում է հոգեւոր համայնքի որպես Քրիստոսի խորհրդական մարմնի նկարագիրը (*Մատթ. ԺԶ 18, Մարկ. Ը 27-30, Դուկ. Թ 18-21, Գործք Ե 11*): Աստծո Որդին

ԱՍՏԾՈՆ ԾՈՒՆԸ՝

մարդեղացավ ու եկավ այս աշխարհ, որ նոր կյանքի համար վերականգնի, նորոգի աստվածային պատկերով ու նմանությամբ արարված մարդու՝ մեղքերից խեղված բնությունը: Ռուս եկեղեցու հոգեւոր հայր Վասիլի Իգումինսկին գրում է. «Սուրբ Հոգին, իջնելով աշխարհ, գործում է հոգեւորականների, աստվածաշնչության, խորհուրդների միջոցով, եւ այդ նորոգումն իրագործում է մշտապես: Միայն եկեղեցուն է գործում այդ նորոգիչ ուժը...»:

Աստված երկրի վրա հիմնեց եկեղեցին, որ վերջինս մարդկանց առաջնորդի դեպի փրկություն եւ հավիտենական կյանք: Եթե մարդն իրապես Քրիստոսի վարդապետության հետեւորդ է, չի կարող մերժել հենց Նրա իսկ հիմնած եկեղեցին՝ «...պիտի շինեն Իմ եկեղեցին, ու ոչոքիսի դռները այն չպիտի հաղթահարեն...» (*Մատթ. ԺԶ 18*):

Հստակ է, որ եկեղեցուց անջատ կամ առանց նրա չկան ճշմարիտ քրիստոնեություն եւ հոգեւոր կյանք, սակայն միայն քրիստոնեական վարդապետության իմացությունը բավարար չէ մարդու փրկության համար: Վաղբրիստոնեության շրջանում Քրիստոսի աստվածությանը հավատալը, Նրա վարդապետության ընդունումը ենթադրում էին մաեւ Տիրոջ Մարմնին՝ եկեղեցուն անդամագրում, ինչը հաստատում է մաեւ Գործք առաքելոցը (*Բ 42-47*): Հետեւաբար մա, ով հեռանում է եկեղեցուց, հեռանում է մաեւ Տիրոջից: Միայնակ հավատացյալը, որքան էլ մեծ հավատ ունենա, մշտապես ենթարկվում է տարաբնույթ փորձությունների՝ մեղքերի որոգայթ, մարմնական կրքեր, խաբեություն, զոդություն, չարի հարձակումներ եւ այլն: Այդ իսկ պատճառով մա պետք է ամուր կառչի եկեղեցուն՝ որպես փրկարար խարսխի, քանզի

նրա գրկում գտնվելով ենք իրապես զգում եւ ապրում Աստծո հետ կենդանի կապը, Նրա օգնությունն ու պաշտպանությունը:

Երկնային Հորն մտն գտնվելու համար պետք է գնալ Նրա տուն՝ եկեղեցի. այստեղ ենք լսում մաեւ մեր Փրկչի խոսքը: Տիրոջ եկեղեցուն Սուրբ Հոգու միջոցով են հեղվում շնորհները: Աստվածային շնորհների փրկարար ազդեցությանը հավատացյալը հաղորդ է լինում սուրբ խորհուրդների միջոցով: Ինչպես Հին Կտակարանում էին ծիսապաշտամունքային արարողությունները կատարվում Տիրոջ տաճարում, այնպես եւ քրիստոնեության տարածումից հետո սրբազան խորհուրդները, Պատարագը պետք է իրագործվեն Աստծո տանը, այն է՝ եկեղեցուն: Քրիստոնեական յոթ խորհուրդները, ծիսապաշտամունքային արարողությունները, սուրբ Պատարագը կատարում են եկեղեցու սպասավորները՝ հոգեւորականները, որոնք իրենց հոգեւոր իշխանությունն ստանում են Ձեռնադրության խորհրդի միջոցով՝ հաստատված դեռեւս առաքյալների կողմից (տես *Գործք առաքելոց*):

Քրիստոնեյա հավատացյալների ամեն մի հավաքատեղի կամ շինություն չէ, որ կարելի է համարել եկեղեցի. Աստծո տունը կառուցվում է հատուկ ընտրված, սրբագործված եւ օծված վայրում: Եկեղեցին նվիրագործված եւ սուրբ է ու երբեք այլ կիրառության համար չպետք է հատկացվի: Այն խորհրդաբանական (mistic) ու նվիրական (sacral) կառույց է, որտեղ կատարվող սրբազան արարողություններն արտացոլում եւ խորհրդանշում են երկնային իրողությունները:

Հայ եկեղեցու հայրերը մեծ ուշադրություն են դարձրել եկեղեցու հիմնարկների, օրհնության եւ օծման կանոնների մշակմանը:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809-1848)

ԱՐՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ՉՐՋԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ՉՐՋԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 4-9, 11-12, 15-17

Ժամանակի ընթացքում «Վերջ Չայաստանի» վեպի ժանրային բնույթի վերաբերյալ գրական մտքի բոլոր կարծիքներին հասկանալի պատճառով չենք անդրադառնում: Բերվածներն էլ բավական են ընթերցելու համար, որ գրեթե բոլորը համակարծիք են մի հարցում՝ իս. Արովյանի երկը արեւելյան դյուցազներգություն է կամ արեւելյան ազգային վիպասանություն: Բուն ճշմարտությունն այն է, սակայն, որ «Վերջ Չայաստանին» իր ժանրով չի տեղավորվում գրականագիտությանը հայտնի տեսական կադապրների մեջ: Եվրոպական վեպերի ու ասիական հեքիաթ սիրավեպերի ժանրային, կառուցվածքային, գեղարվեստական ու այլ յուրահատկություններին քաջածանոթ իս. Արովյանը նրանց միակողմանիորեն նմանվելու մտքից հեռու էր, ընդհակառակը՝ կարողացել է իր համարի ուժով, համադրելով երկուսն էլ, ստեղծել հայ կյանքը պատկերող, հայի սրտին դուր եկող մի նորարարական վեպ, որը կարողաւ մեքք հասնելիք ինքնաճանաչման, եւ օտարներն էլ կարողաւ մեզ ճանաչելիք: Սա, փաստորեն, հայ ժողովրդին բարեկրթելու, ժամանակի առաջավոր ազգերին ճանաչելի դարձնելու ծրագիր էր, որ բարեխղճորեն իրականացնում էր Արովյանը:

Վեպի երկրորդ՝ «Ողբ հայրենասիրի» վերնագիրը հուշում է, որ պահանջվում է լուրջ ու համակողմանի մոտեցում, որովհետեւ «Վերջը» կամ «Ողբ հայրենասիրին», խորենացու, Նարեկացու, Շնորհալու հայտնի ողբերի ավանդների շարունակությունը

լինելով, նորություն էր ու խորապես ազգային թե՛ իր բովանդակությամբ ու թե՛ մայրով, թե՛ ժողովրդական տարերքի կյանքը պատկերող դիպաշարով, թե՛ պատմության ու ներկայի համադրումներով, թե՛ իրադարձությունների պատկերումով, թե՛ պատմական դեմքերի կերպավորումով, թե՛ դեպի ապագան միտված գաղափարական ու գեղագիտական հարցադրումներով, թե՛ կերպարակերտման ու պատումի արվեստով:

Կարելի է որոշել գրողի թե՛ ընդհանուր գրական ուղղությունը, թե՛ նրա առանձին որեւէ նշանավոր երկինը: Գրականության տեսաբաններն Արովյանի գրական ուղու տարբեր փուլերում կարող են մատնացույց անել ժամանակի բոլոր ուղղությունների ու հոսանքների դրսևորումները՝ վաղ շրջանի կլասիցիստական բանաստեղծություններից ու աշուղական երգերից, դորպատյան շրջանի սենտիմենտալիզմից ու ռոմանտիզմից մինչեւ լուսավորական ռեալիզմի դրսևորումները: Արովյանագիտությունը չի շրջանցել այս հարցադրումը, սակայն տրվել են հակասական բնորոշումներ. ոմանք Արովյանին ռեալիստ են անվանել, ոմանք՝ ռոմանտիկ, ոմանք՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Այս կարծիքներից ոչ մեկն էլ միանշանակ ընդունելի չէ ոչ այն պատճառով, որ մեկը լավ է, մյուսը՝ վատ կամ արատավոր: Խոսքը գրողի գեղարվեստական մտածողության եղանակի եւ կերպարատեղծման սկզբունքների մասին է, որոնց գիտական ճիշտ բնութագրումը մոյմպես պահանջում է համակողմանի լուրջ մոտեցում եւ միմյանց սերտորեն շաղկապված

հարցերի հանգամանակից քննություն:

Նուրբ ու բարդ այս խնդրի պարզաբանումն սկսենք նրանից, որ իս. Արովյանը քաջածանոթ է եղել 18-րդ դ. վերջերին եւ 19-րդ դ. առաջին կեսում ռուս եւ եվրոպական գրականությունների մեջ կիրառվող բոլոր ուղղություններին ու հոսանքներին եւ իր գրական ուղու տարբեր փուլերում հետեւել է իրականության ճանաչման ու պատկերավորման տարբեր սկզբունքների. վաղ շրջանի գրաբար բանաստեղծություններում, ինչպես վերը տեսանք, նա հետեւել է կլասիցիզմի գեղագիտությանը, բարբառախառն բանաստեղծություններում՝ ուշ միջնադարի տաղերգուների եւ աշուղների արվեստին, դորպատյան տարիներին հետեւել է եվրոպական ու ռուսական սենտիմենտալիզմին ու ռոմանտիզմին, այնուհետեւ՝ լուսավորական ռեալիզմին: Իսկ «Վերջ Չայաստանի» վեպում առկա են դրանց բոլոր տարբերը՝ ռոմանտիկականի գեղակալությամբ:

Արովյանը հավատարիմ է պատմական ճշմարտությանը: Անհիմն չէ վեպի առաջին հատվածներում հայ գյուղական տարերքի պատկերների համեմատությունը բազալկյան ռեալիզմի հետ: Չնայած հեղինակի սուբյեկտիվիզմին, հզոր ոգեւորությանը եւ քնարական շեղումներին՝ ճշմարտացի են նաեւ 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի եւ Երեւանի բերդի գրավման դրվագների պատկերումները՝ որպես ռեալիստական: Ժամանակի ռուսական ռազմական արխիվների ուսումնասիրությանը դա ցույց է տվել Յովի. Թումանյանն իր «Երեւանի պատերազմը եւ Արովյանի «Վերջ Չայաստանի» աշխատության մեջ: Սակայն այլ է գլխավոր հերոսի եւ հեղինակի ինքնակերպավորման խնդիրը: Ռոմանտիկ հեղինակն իր իդեալականացրած հերոսին հակադրում է միջավայրին եւ նրա գործողություններով ջանում է փոխել միջավայրի պատկերը, իսկ ռեալիստը, ընդհակառակը, ստեղծում է հերոսի եւ միջավայրի ներդաշնակ պատկեր եւ միջավայրի էությունը ցուցադրում հերոսի միջոցով: Արովյանի Արախն ռոմանտիկների նախասիրած բացառիկ հերոսն է. ստրկական հնազանդության վարժված քանաքեռցիների հակապատկերն է եւ հեղինակի հայրենասիրության, ազատասիրական գաղափարների, հայ մարդու




քննարկության լավագույն հատկանիշների խտացումը:

Վեպի ֆաբուլան եւ պատումի յուրահատկությունները: Ֆաբուլան ավելի լայն գրականագիտական հասկացություն է, քան դիպաշար սյուժեն, եւ ընդգրկում է գրական երկի ընդհանուր հյուսվածքին առնչվող բազմաթիվ հարցադրումներ, որոնց թվում է պատումը կամ նարատաբանությունը: Վեպի նյութն ընտրելիս Արովյանն ունեցել է լուրջ մտախոհություններ. ինչ թե՛ մտերմ, որի պատկերումը հնարավորություն տար գեղարվեստորեն մարմնավորելու ժողովրդական կյանքն ու տառապանքը, ազատասիրական ձգտումները, պարտադրված խեղճությունն ու հերոսական բնավորությունը, մեր ժողովրդին բնորոշ մարդկային լավագույն հատկանիշները:

Շարունակությունը՝ էջ 7

ՔԱՐԵՂԵՆ ԿԱՌՈՒՅՑ



Այսպես՝ Չայոց ծխամատյանում՝ «Մաշտոց»-ում, գետեղված են եկեղեցու հիմնարկերի, օրհնության կանոնները (տե՛ս «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», 4. Պոլիս, 1807, էջ 155), որոնց հեղինակը Յովիան Ա Մանդակունի հայրապետն է (478-490 թթ.): Եկեղեցու հիմնարկերի կանոնում մասնավորապես ասվում է՝ նախապես ընտրվում է եկեղեցու կառուցման վայրը, ապա՝ բերվում են 16 քարերը (12 առաքյալներ, Մարկոս ու Դուկաս ավետարանիչներ, Պողոս առաքյալ եւ ս. Գրիգոր Լուսավորիչ): Յիմքերում տեղադրվում են սուրբ մյուռոնով օծված 16 քարերը: Տասնվեց սյուներից հինգը հարավային, հինգը հյուսիսային կողմում են հաշվվում, երկուսը՝ արեւմտյան դռան մոտակայքում, իսկ չորսը՝ բուն խո-

րանի չորս անկյուններում: Աստծո տան կառուցման ավարտից հետո կատարվում է նավակատիք, այսինքն՝ նորակառույց եկեղեցին մկրագործվում է: Այն օրհնվում է տյառնագրվում է սրբազան մյուռոնով: Գմբեթին կանգնեցվող խաչը եւս օծվում է սուրբ յուղով:

Այսպիսով՝ Աստծո տունը՝ եկեղեցին, կառուցման սկզբից մինչեւ ավարտը մաքրագործվում ու սրբագործվում է: Եկեղեցին նաեւ քրիստոնեական դավանանքի տունն է, որտեղ գործում է Սուրբ Յոզու գործությունը, հեղվում են աստվածային շնորհները, հնչում աղոթքներն ու շարականները, կատարվում են սուրբ խորհուրդները, ժամերգություններն ու Պատարագը:

Յիշենք նաեւ, որ քրիստոնեական եկեղեցին, որպես տեսանելի, նյութական իրողություն, որպես շինություն, ձեւավորվել է Վկայության խորանի հիմքի վրա: Յավատացյալը, անշուշտ, ամենուր էլ կարող է աղոթել, սակայն քրիստոնեական յոթ խորհուրդները (լինում են բացառություններ. օրինակ՝ հոգեւորականը կարող է տանը կամ հիվանդանոցում մկրտել եւ հաղորդություն տալ ծանր հիվանդին, ով ի վիճակի չէ գալ եկեղեցի), աստվածաբաշտական արարողությունները կատարվում են միայն եկեղեցում՝ հաստատված կարգի համաձայն՝ հոգեւոր սպասավորների կողմից: Այսպես՝ եկեղեցում կառուցված մկրտության ավազանը, սուրբ խորանն ու Սեղանը առանձնակի ծխական նշանակություն ունեն խորհուրդների կատարման համար: Ս. Պատարագի սպասքը եւս դրվում է եկեղեցում: Միայն Կարգ հիվանդաց խորհրդի դեպքում, եթե հավատացյալը շատ ծանր վիճակում է, հոգեւորականը կարող է այցելել նրան, ընդունել նրա խոստովանությունը եւ հաղորդել Քրիստոսի սուրբ մարմնին ու արյանը:

Չայաստանում եկեղեցիներ կառուցվել են Դ դարասկզբից. դրանք եղել են բազիլիկ, դահլիճամանա եւ գմբեթավոր: Ժամանակի ընթացքում փոփոխվել են եկեղեցիների հատակագծային ու ծավալատարածական լուծումները: Եկեղեցիների տարբեր կերպերն ու տեսակներն ունեն խորհրդաբանական իմաստ: Այսպես՝ եռանակ բազիլիկները մարմնավորում են աշխարհիկ կյանքի հորձանուտով լողացող նավ-եկեղեցին, որը քրիստոնյա հավատացյալներին պետք է հասցնի խաղաղ նավահանգստին՝ երկնային արքայությանը: Խաչաձեւ եկեղեցին իշխեցնում է, որ քրիստոնեության հիմքում Աստծո Որդու փրկագործությունն ու Նրա խաչն են: Բոլորաձեւ եկեղեցիներն Աստծո խորհրդական մարմնի՝ եկեղեցու հավիտեանականության խորհրդանիշն են:

Չայոց ծխական ու եկեղեցական կանոնները թելադրել են եկեղեցու՝ նյութեղեն, առարկայական կառույցի ճարտարապետության որոշ առանձնահատկություններ: Չայաստանում դեռեւս վաղ միջնադարում առաջացել է հայկական ճարտարապետության յուրատիպ կառույցներից մեկը՝ որպես տապանատուն ծառայող գավիթը:

Այսպիսով՝ եկեղեցին՝ քարեղեն կառույցը, մաքրագործված, սրբագործված վայր է, Տիրոջ տունը, որտեղ ներկա է կենդանի Աստված, գործում է Սուրբ Յոզու նորոգիչ գործությունը, բաշխվում են աստվածային շնորհները:

Այն փրկարար նավ է, որի նավապետը Տերն է, որ կանչում է իր մոտ. «Եկեք ինձ մոտ բոլոր հոգնածներդ ու տառապածներդ եւ կգտնեք մխիթարություն» (հմմտ. Մատթ. ԺԱ 28): Եվ այս նավում տեղ կա բոլորի համար. երկնային Չայոց սիրում է մեզ, ու եկեղեցին այն վայրն է, որտեղ Նա մեզ է սպասում անսահման սիրով եւ ջերմությամբ, որտեղ չկա խտրություն սեռերի, ազգությունների, տարիքի, արդարների եւ ամենեղների միջեւ, որտեղ որեւէ մեկն ավելորդ չէ... Աստված սպասում է մեզ բոլորիս... Նավ բարձրացողներից ոմանք արդեն հասել են հոգեւոր փորձառության եւ հասունության, ոմանք ասես մանուկ լինեն, որոնց մեղքը դեռեւս չի խոցել ու չի չարացրել, ոմանք էլ նման են կույրի, այսինքն՝ տեսանելի, նյութեղեն խնդիրներն ու տառապանքներն այնքան են լլկել նրանց հոգին, որ վախից ամուր փակել են աչքերը, կողպել սրտերն ու հոգիները անտեսանելի Բարության առջեւ: Եվ հենց այստեղ՝ եկեղեցում է գործում Սուրբ Յոզու գործությունը՝ անհնարինը դարձնելով հնարավոր, իսկ մեզ՝ մեղսագործ արարածներին, փոխակերպելով Արարչի արքայության ժառանգորդներին:

Արփինե ԶԱՆԹԿՅԱՆ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 15-17

1870-1882 թթ.՝ Շուշիում ուսուցչական պաշտոն վարելուց հետո, Աղայանը վերադառնում է Թիֆլիս՝ միանգամայն հիասթափված ուսուցչության ասպարեզից: Այստեղ նրան նոր ոգեւորություն էր սպասվում. այդ ոգեւորության առիթը տիրին Սոֆյա Բաբայանցի մանկապարտեզն էր: Այդ աշխատանքի համար նա պարտական էր պետերբուրգյան տարիների իր ընկերոջը՝ Ավետիք Բաբայանցին: Վերջինս, տեսնելով Աղայանի ջլատված վիճակը, նրան խորհուրդ է տալիս հանգստանալ: Ա. Բաբայանի համեստ բնութագրումով Աղայանը հարկավոր էր մանկապարտեզին, որ ազգային-ժողովրդական տարր մտցնել պարտեզի մեջ էր ազգային ծաղիկներ բուսեցնել: Այս աշխատանքն Աղայանին թույլ է տալիս մտածելու, որ ինքը «զարմանալի աստղի տակ է ծնված», որ իր ձեռք բերած բարոյական և մտավոր հարստությունը բախտավորություն է: Նվիրվելով մանկական գրականությանը՝ Աղայանը կազմում է «Ուսումն մայրենի լեզվի» դասագրքերից երկուսը:

Հուլիսյան վեջ Աղայանն իր առաջին սիրահարվածության մասին խոսում է մանկությունը ներկայացնելիս: Մայիկոն Ղազարոսի միակ դասընկերն էր Շամշուկյայի ծխատեր քահանա տեր Պետրոսի մոտ ուսումնառության ժամանակ: Հուլիսյանը բավական հասուն մարդ էր և արդեն հայտնի անհատականություն, Մոսկվայում սիրահարվում է Վարվարա Պետրովնային: Այդ զգացմունքը միանգամայն տարբեր էր փոքր հասակում զգացածից: Վարվարային Աղայանը ներկայացնում է որպես կիրթ, բազմակողմանի զարգացած, ազատամիտ գաղափարներ ունեցող աղջկա: Աղայանը խորությամբ հասկանում էր, որ չէր կարող կյանքը կապել օտար միջավայրում մե-

ծացած, միանգամայն այլ մշակույթ կրող աղջկա հետ:

1868 թ. Թիֆլիսում հայ օրիորդի հետ անսպասելի ճակատագրական հանդիպումը շրջում է Ղազարոսի կյանքի ընթացքը՝ մեկընդմիջտ նրան կապելով այդ աղջկան: Հանդիպման մույն օրը նա սկսում է տեղեկություններ իմանալ նրա մասին: Այդ հարցում նրան օգնում է քեռակնոջ մայրը, որ աղջկա հարեանություն էր ապրում: Հանդիպումից երեք օր անց Աղայանը մշտնադրվում է Եփրեմիայի (Փեփեյի) հետ: Նրանց հարսանիքը տեղի է ունենում 1868 թ. հոկտեմբերի 22-ին: Աղայանը և Փեփեյը համատեղ կյանքի ընթացքում ունենում են վեց երեխա, որոնցից երկուսը՝ Սոնան և Հայկը, մահանում են մանուկ հասակում՝ խոր վիշտ պատճառով ծնողներին: «Սարափեյի բան է առաջին կսկիծը որդեկորույս ծնողի համար: Մոր վիշտը շատ ու շատ խոր էր, բայց սիրտն էր զցում և հալվում, մաշվում, իսկ ես գոռում էի զագամի պես, որ դուրս մղեմ սրտիս կսկիծը»,- դառնությամբ գրել է հուլիսյանը (հ. 4, էջ 478): Երկու երեխաներին հետևում է մյուս զավակի՝ Վիգենի կորուստը: Այդ կսկիծից մահանում է Փեփեյը՝ Աղայանի խնամքին թողնելով երեք անչափահաս երեխաներին: Իր հարազատ մարդկանց կորստից հետո գրողի կյանքում դժվարին շրջան է սկսվում. «Շատ անգամ է պատահել, որ ես ուզեցել եմ մի սպիտակուրտի և անմիտ բան բռնել, բայց մտածեցի, որ լավ բան չէ արածս, զավակներս կարող են մնալ իսպառ անխնամ» (հ. 4, էջ 499):


Շիրվանզադեն իր «Կյանքի բովից» հուլիսյանը մեջ հիշատակում է Աղայանի այդ դժվարին վիճակը, բայց որոշ ժամանակ անց, երբ հանդիպում է Աղայանին, ներկայացնում է նրա կերպարանփոխությունը՝ պայմանավորված նրա երկրորդ ամուսնությամբ. «Նա ինձ ծանոթացրեց իր կնոջ հետ, որ նույնպես այրի էր, բայց ան-

զավակ» (Շիրվանզադե Ա., Երկերի ժողովածու, հատոր 5, Եր., 1988, էջ 197):

Աղայանն իր հուշագրությունն ավարտում է խոր լավատեսությամբ. «Ես նորոգվեցի հոգով և մարմնով, և սրա արդյունքն եղավ իմ «Արեգնազան»-ը, «Տորք»-ը և սրանց հաջորդող գրածներս»: Հուլիսյանը հուշագրությունն ավարտում է հետագայում որոշ փոփոխությունների ենթարկված «Լուսնահաչ» բանաստեղծության մախնական տարբերակով (հ. 4, էջ 500):

Բայց լուսինը բակ բոլորած՝ շարունակում էր իր ճամփան, Համարելով, թե չի լսում, որ իր վրա հաչողներ կան...

Աղայանի հուշագրության ճանաչողական և գեղարվեստական արժեքը հեղինակի կողմից անցյալի դեպքերին և իրադարձություններին գեղագիտորեն մոտենալու, ժամանակակից գործիչների հետ ունեցած անհույսությունների միջոցով նրանց բնութագրելու և հուշերը վերարտադրելու հեղինակային ինքնատիպ մոտեցման մեջ է: Գրողը ներկայացրել է ժամանակաշրջանի ազգային-հասարակական կյանքում տեղ գտած խնդիրները, հայկական կենցաղին բնորոշ հատկանիշները՝ հեղինակային երեակայության համատեքստում արժեւորելով և հաճախ ցույց տալով դրանցում տեղ գտած թերություններն ու բացթողումները: Երկն արժեքավոր է մասնավորապես բարբերի գեղարվեստական պատկերների հարստությամբ: Հուլիսյանը կերպարակերտմանը հատուկ են զուգահեռ հակադրությունը, հերոսների բեռնազանց միջոցով մեզ հայտնի գործիչների դիմաստվերների կերտումը: Հեղինակի կերտած կերպարները որքանով որ վավերագրական են, այնուամենայնիվ, Աղայանը կտրուկ է իր բնութագրումներում ու երբեմն՝ սուբյեկտիվ: Նա հայտնի անձանց ներկայացնում է սեփ և սպիտակի միջակայքում, իսկ գործողությունների և մարդկային



բարդ փոխհարաբերությունների կենտրոնում իրեն: Այդ բնութագրումներն զգալիորեն անձնական տարրի գերակշռություն ունեն և երբեմն ծայրահեղության են հասնում:

Ամփոփելով նկատենք, որ Ղազարոս Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրական արժեքավոր երկն ընդգրկում է մարդկային ներաշխարհի բացահայտման, ստեղծագործական ընթացքի, ձեռքբերումների և բացթողումների մասին հեղինակի անձնական դիտարկումները: Արեւելահայ գրական արձակում նոր սկիզբ առած գրական այս ժանրը հեղինակային ինքնատիպ լուծումների շնորհիվ տարաբնույթ դիտարկումների հնարավորություն է ընձեռում՝ իր ամբողջության մեջ ցույց տալով ժամանակի գրական-մշակութային կյանքի վերաբերյալ բավական արժեքավոր տեղեկություններ: Հմուտ գեղագետի տեսադաշտում ավանդական գյուղաշխարհի կյանքն է՝ իր դժվարությունների և մարդկանց կենցաղի պատկերներով: Դրան զուգահեռ՝ ներկայացված է գրական-մշակութային աշխուժությամբ ապրող քաղաքների՝ Թիֆլիսի, Մոսկվայի և Պետերբուրգի պատկերը:

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Ստալինյան բռնաճնշումները և հայ գրողների մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը

Սկիզբը՝ էջ 4

Մեղադրական եզրակացությամբ Բակունցը եղել է՝

«1. ...հակահեղափոխական, տրոցկիստական, նացիոնալիստական կազմակերպության անդամ, որը 1934 թ. դեկտեմբերի 1-ին սպանել է Կիրովին և հետագայում նախատեսում էր այդպիսի տեռոր՝ ընդդեմ ՀամԿ(Բ) և խորհրդային իշխանության»:

2. 1930 թ. Չարենցի հետ կազմակերպել է հակահեղափոխական գրողների կազմակերպություն: 1933 թվականից գլխավորել է կենտրոնը, որը նպատակ ուներ սպանելու Ստալինին, նախապատրաստում էր մահափորձ Բերիայի դեմ,

3. կազմակերպությունը կապված էր Մոսկվայի կենտրոնի հետ (Վաղարշակ Տեր-Վահանյան և ուրիշներ)» (3, էջ 55):

Բակունցի գնդակահարությունը իրականացրել են դատավճիռը նրան հայտնելուց մեկ օր հետո: Մեկ ամբողջ օր Բակունցն սպասել է իր մահվանը: Ի՞նչ է մտածել, ի՞նչ ապրումներ է ունեցել, ի՞նչպես է դիմացել...

Այդ գիշերը Բակունցի կյանքի վեպն է:

Բակունցի գնդակահարության տեղի հարցը շատ տեսակետներ է հարուցել: Բակունցի դատական գործի մեջ այդ կապակցությամբ վկայություններ չկան և ըստ ժամանակին ընդունված գործավարության՝ չպետք է լինեին: Բակունցի գնդակահարության տեղի վերաբերյալ եղել են պարականոն վկայություններ երկու կողմերից: Այդ մասին կա միմիայն մեկ ստույգ վկայություն, որ պահպանվել է Գուրգեն Մահարու «Ճաղկած փշալարեր» վիպակում:

Մահարու խոսքի ստուգությունը կասկածի ենթակա չէ, որովհետև բանտում նրան և մի քանի այլ ձերբակալված գրողների պատմել է ՆԳԺԿ-ի պետ Մուղդուսու գլխավորած պատժիչ խմբի՝ Բակունցին գնդակահարողներից մեկը՝ Երեանի բանտի պետ Սահակ Ասլամովը, ում այդ ժամանակ ևս ձերբակալել էին և պետք է գնդակահարեին: Ըստ այդմ Բակունցին գնդակահարել են Երեանում՝ Թիֆլիսի մերձակայքում (4, էջ 340):



Պահպանվել են Բակունցի հարցաքննությունների 10 արձանագրություն, բանտից ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունուն, ՀԽՍՀ-ում ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի լիազոր, պետամվտանգության մայր Մուղդուսուն, նաև Անդրկովկասյան զինվորական հանձնաժողովի դատախազի անուններով հասցեագրված 4 դիմում: Գործում գետեղված են նաև ցուցմունքներ այլ քաղբանտարկյալների հարցաքննություններից, ամբերեսման, դատական նիստերի, զինվորական հանձնաժողովների խորհրդակցությունների այլևայլ արձանագրություններ, մեղադրական եզրակացություն, դատավճիռ, գնդակահարությունն ի կատար ածելու տեղեկանք և այլ նյութեր:

Ակտել Բակունցի կյանքն ընդհատվեց թռիչքի մեջ՝ 38 տարին նոր էր բոլորել, երբ գնդակահարվեց՝ մեղադրվելով ժամանակի բոլոր մեղքերի մեջ՝ որպես «ժողովրդի թշնամի», «ազգայնամուլ», «ահաբեկիչ», «հակահեղափոխական» և «տրոցկիստ»: Ձերբակալվել է 1936 թվականի օգոստոսի

9-ին, գնդակահարվել է 1937 թվականի հուլիսի 8-ին:

Հիմա տեսնենք, թե այս ամենի մեջ ինչպես է երևում այս արտակարգ մուրթ ու զգայուն գրողի ու մարդու, իր հայրենիքի մկրդյալ քաղաքացու կերպարը: Այս տեսակետից եղած նյութերը լուսաբանելու կարևոր նախադրյալ են նաև Բակունցի արդարացման կապակցությամբ նրա կնոջ՝ Վարվառա Չիվիջյանի վկայությունները՝ գրված 1955 թվականին (2, էջ 324-33):

«Կալանքի ժամանակ նրա հետ ունեցել եմ երեք տեսակցություն՝ 1936 թ. սեպտեմբերի վերջին, հոկտեմբերին և նոյեմբերին»,- գրում է կինը և ներկայացնում: Առաջին հանդիպման ժամանակ Բակունցը «քիչ էր փոխվել <...>, զգացվում էր, որ իր ձերբակալությունը համարում է ինչ-որ թյուրիմացության հետևանք, որը շատ շուտ պիտի բացահայտվեր» (2, էջ 328):

Հոկտեմբերի այցելության ժամանակ Բակունցի սպիտակեղենը տանը լվանալիս շապիկի վրա նկատում է արյան հետքեր: Այնուհետև. «Բակունցը մեկ ամսվա ընթացքում այնքան էր փոխվել, որ ես դժվարությամբ ճանաչեցի այն մարդուն, ում գիտեի երկար տարիների ընթացքում: Ամբողջ տեսակցության ժամանակ Բակունցը հեծկտում էր՝ կորցնելով ինքնատիրապետումը, <...> քամելով արցունքից ամբողջովին խոնավ թաշկինակը»:

Բակունցը կնոջն է վերադարձրել Մոսպասնի երկերի ռուսերեն ժողովածուն (առաջին երեք ամիսներին թույլատրել են գեղարվեստական գրականություն), որի մեջ գետեղված «Պարան» նորավեպի առանձին բառերի տակ կինը նկատել է մատիտով մշված կետեր, իսկ լուսանցքները սեղմված-ընդգծված էին եղունգով. «բովանդակությունը բացահայտեց նրա բարոյական ծանր կացությունը»:

Բակունցն արդեն նույնական չի եղել, նրան այնքան էին տանջել, որ փոխվել էր:

Երրորդ այցելության ժամանակ, արդեն մահապատժի սպասումով, իրեն պահել է

հանդարտ: Կնոջը հարցրել է Մոսպասնի նորավեպի մասին. «Հը, ընթերցել ես...»: «Շանր է», - պատասխանել է կինը: Բակունցը շարունակել է. «Ամուր եղի, հաշվի, որ վթար է եղել և ես վթարի են ենթարկվել»:

Վերջին երկու այցելություններին ներկա է եղել նաև 12-ամյա որդին՝ Սեւադան, ում հետ շատ կապված էր: Դիմելով տղային՝ ասել է. «Դու շատ կամաչես եթե քո հորը երեանի փողոցներով տանեն դատարան: <...> դու մի ամաչիր քո հոր համար, հիշիր, հայրդ այնպիսի բան չի արել, որի համար կյանքում պիտի կարմրես»:

Կինը մտաբերում է նաև իր վերջին այցելությունը. «1937 թ. հուլիսի 18-ին չընդունեցին իմ տարածը՝ ասելով, որ Բակունցն արդեն աքսորվել է» (2, էջ 329):

Խաբել են, քանի որ 10 օր առաջ արդեն գնդակահարվել էր:

Իսկ խաբելը, ինչպես միշտ, նաև այդ տարիներին պետական քաղաքականություն էր: Հետո՝ ավելի ուշ, Բակունցի մոր հարցումին պատասխանել են, որ նրա որդին մահացել է 1945-ի նոյեմբերին: Հերթական խաբեությունը:

Ավելալենք, որ որպես «ժողովրդի թշնամու» կին՝ 1937 թվականի սեպտեմբերի 17-ին ձերբակալել են նաև Վարվառա Չիվիջյանին, 8 ամիս առանց հարցաքննության պահել բանտում, հատուկ խորհրդակցություն որոշմամբ ութ տարով քստրել Տեմինկոյան ճամբար, որտեղից վերադարձել, բնակվել է Գորիսում՝ Բակունցի հայրական տանը և զբաղվել որդու դաստիարակությամբ:

Նրա ձերբակալությունից հետո բռնազորավել են Երեանի տունը՝ անպաստան թողնելով որդուն և քաղցկեղով հիվանդ մորը, միաժամանակ տանելով նաև Բակունցի ձեռագրերը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՊՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ

ՂԱՐՁԻՐ ԱՄԵՆԱԳԵՂԵՅԻԿ ԴԵՄՔԸ

«Անտեսանելի անցումներ» ռադիոհաղորդումներից

Եվ այսօր նորից թո մասին են ուզում խոսել: Եվ այսօր նորից դու ես ինձ թեման տվել: Եվ նորից այսօր խոսում եմ քեզ և քեզին, ինչ տեսնում եմ շուրջս՝ հանդիպելով քեզ իմ կյանքի ճանապարհներին: Իմացիր, որ բոլոր կյանքները, որոնց մասին խոսում եմ, կապված են նաեւ քեզ հետ, որովհետեւ ամբողջ շաբաթ այնքան հաղորդագրություններ, զանգեր, էլեկտրոնային նամակներ են ստանում: Բացի այդ, ես էլ մի անցորդ եմ այս աշխարհում, քայլում եմ այս աշխարհի ճանապարհներով, շրջում այս երկրում, այս քաղաքում... այս տանջված, հարուստ եւ միաժամանակ աղքատ, գեղեցիկ եւ միաժամանակ կեղտոտ քաղաքում եւ հանդիպում եմ դեպքերի, տեսնում եմ դեմքեր, որ մտածելու, խորհելու տեղիք են տալիս:

Եվ ինչո՞ւ եմ ասում այս ամենը: Ասում եմ, որովհետեւ հաճախ չէ, որ լինում եմ քաղաքի կենտրոնում, սակայն շաբաթ օրվա մի երեկո ինձ հրավիրեցին քարոզի Աթենքի կենտրոնում գտնվող մի եկեղեցում: Երկար ժամանակ էր դուրս չէի եկել շաբաթ երեկոյան: Վերադառնալիս ճանապարհներին տեսնում էի երիտասարդների մեծ բազմություն: Քաղաքն ամենուր լի էր երիտասարդներով, որ դուրս էին եկել զվարճանալու, ուրախանալու, թեթևանալու, հանգստանալու, ինչ-որ բան զգալու, ինչ-որ բան գտնելու: Բոլորն էլ ինչ-որ բան են փնտրում... Այն ժամին, երբ ես տուն էի վերադառնում՝ պատրաստվելու հաջորդ օրվա սուրբ Պատարագին, հանգստանալու, քնելու, երիտասարդներն ու պատանիները դուրս էին թափվում տներից՝ գտնելու ինչ-որ գեղեցիկ բան: Եվ քանի որ ես էլ համեմատաբար երիտասարդ եմ մյուս քահանաներից ու նաեւ դպրոցում շփվում եմ պատանիների հետ, ինձ հանգիստ էի զգում նրանց մեջ, առանց ամաչելու նայում էի նրանց դեմքերին: Ուզում էի


հասկանալ՝ ինչ են զգում այդ երեխաները:

Վերադառնալիս մտա մտորո: Նստեցի վերջին վագոնը՝ մտածելով, որ այնտեղ ավելի քիչ մարդ կլինի: Բայց վագոնը լի էր մարդկանցով, որոնք հիմնականում օտարերկրացիներ էին, շատ քիչ հույներ կային: Հաջորդ կայարանում օտարերկրացիների մեծ մասն իջավ, եւ մերս մտան անթիվ-անհամար երիտասարդներ (հավանաբար կինոթատրոնից էին գալիս, որ գտնվում էր մոտակայքում)՝ ունենալով զգալի մեծ մազերով, ունենալով գուգլանոց-դարված, ունենալով պատռված տաբատներով, հիմնականում ժամանակակից, տարօրինակ, վայրի հագնված. երկաթե գոտիներ, շորերից տարօրինակ պատկերներ, մազերը սարքած նոր ոճով, ինչպես են դրան ասում... Էնձ, ճիշտ են ասում, էնձ, այսինքն՝ շուտ տված մազեր, դեպի դեմ սանրված. ասես ետեւից քամի էր փչել ու բոլոր մազերն առաջ բերել: Ահա այս դեմքերը՝ ներկած աչքերով, շրթունքներով, այտերով, օծանելիքներով ողողված, նոր հոտով լցրին վագոնը: Կորավ նախկին հոտը, որ բերել էին պակիստանցիները, կալկաթացիները եւ բազմաթիվ այլ օտարերկրացիներ (ինձ ճիշտ հասկացեք, ռասիստ չեմ, պարզապես ասում եմ, որ հոտն ուրիշ է), ու վագոնը լցվեց օծանելիքով, ծիծաղով, աղմուկով:

Եվ ես նրանց էի նայում: Ավզում ծիծաղում էին ինձ վրա, ծաղրում, հետո տեսան, որ ես էլ որոշ չափով երիտասարդ եմ, զգացին հավանաբար տարիքային մոտիկություն ու երեւի մտածելով՝ «Ոչինչ, մեր մարդը չէ, բայց տարիքով մոտ է», սկսեցին հարմարվել իմ ներկայության հետ ու այլեւ չծաղրել: Իսկ ի՞նչ էի անում ես: Այդպես նրանց նայելով՝ փորձում էի նրանց կերպարանքից հեռացնել այն ամենն, ինչ ինձ դուր չէր գալիս: Այսինքն՝ ինձ նկարիչ էի պատկերացնում՝ խոսելով ինքս ինձ հետ. «Ե՛ս մի քիչ նկարչու-

թյուն անեմք: Տեսնո՞ւմ ես այս երիտասարդին: Ետ տար նրա «Էնձ»-ի ոճով մազերը, բացիր, թող երես դեմքը, գեղեցկացրու, մաքրիր նրա դեմքը: Շատ պզուկներ ունի: Ոչինչ, կարելու չէ, երիտասարդներ են, պզուկ էլ կունենան»: Այս ամենն անելուց հետո մաքրեցի շուրթերի, աչքերի ներկը, կարգի բերեցի որոշ շորեր, հագցրի պակասող շորերը, հանեցի ավելորդները: Դեմքը մի քիչ խաղաղվեց... Հետո ավելի խորացա այս երեխաների աչքերի մեջ, որ լարված, դժգոհ հայացքներ ունեին, որ ժամանակ առ ժամանակ հիմար կատակներ էին անում ու ծիծաղում մի փոքր մյարդային, ջղածգված ծիծաղով, որի մեջ հոգեւոր խաղաղություն չկար: Դա հոգին հանգստացնելու ուրախություն չէր, այլ մի ուրիշ՝ այդ պահին թեթևանալու ուրախություն:

Այդպես մտովի մաքրեցի, փոխեցի նրանց տեսքը: Կարծում եմ՝ տեսել եք ինչ սրբապատկերներ, որ չեն երեսում, սեւացած են, փոշոտ: Երբ նկարիչներն ու հատուկ մասնագետներն այդ նկարները ճետուկ են անում ու մաքրում, տակից երեսում է շատ գեղեցիկ սրբապատկերը՝ անհավատալի գեղեցիկ: Եվ ասում ես. «Այս փոշոտ, խանձված, վնասված նկարն ինչքան գեղեցիկ է տակից»: Այս բանը զգացի նաեւ ես իմ այդ նկարչությունն անելուց հետո: Դրա համար է Աստված ինձ քահանա դարձրել, որպեսզի կարողանամ թափանցել մարդկանց հայացքների մեջ ու տեսնել այն ամենն, ինչ որ շատերը չեն կարող հեշտորեն տեսնել: Ինչո՞ւ: Որովհետեւ տվորել եմ շփվել մակերեսայնորեն, տեսնել միայն այն, ինչ ցույց է տալիս դիմացինն արտաքինապես, եւ ոչ այն, ինչ ցույց է տալիս իր սիրտը՝ սառը, ծաղրական, անտարբեր, թեթևամիտ, խակ հայացքի ետեւում: Գնա դեպի խորքը, փորձիր գտնել խորքում եղածը եւ լսիր այն շարականը, որ երգվել է նրա մկրտության ժամանակ, երբ նու-



րածին էր դեռ. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք (Պաղ. Գ 27), ալելուիա»:

Անկեղծ եմ ասում քեզ. փնտրում էի Քրիստոսին այդ դեմքերի մեջ, այդ զգալի մազերով, վայրի հայացքներով, տարօրինակ հագնված երիտասարդների մեջ, որ ծիծաղում էին ջղածգորեն, ծաղրում մեկը մյուսին, խաղում մեկը մյուսի հոգու հետ ու քրքշում միասին: Եվ անկեղծ եմ ասում. արածս ուղղումներից հետո այն, ինչ որ մնաց յուրաքանչյուրից, մի սուրբ դեմք էր, շատ գեղեցիկ դեմք: Գնացք մտած ու աղմուկ, ճիչ ու աղաղակ բարձրացրած այդ երիտասարդներից յուրաքանչյուրին տեսնում էի այնքան գեղեցիկ, տեսնում էի սուրբ աղջիկների ու սուրբ տղաների: Եվ խորհում էի ինքս ինձ. «Տես, Աստված այս երեխաներին էլ է ստեղծել սրբեր դառնալու համար: Նրանց սաղմնավորումը մոր որովայնում Աստծու սխալը չի եղել:

Շարունակությունը՝ էջ 8

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809-1848)



Սկիզբը՝ էջ 5

Որոնումները նրան կանգնեցնում են հայության կյանքի վերջին կարեւոր իրադարձությունների՝ 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի վրա, երբ ռուսական զորքի եւ հայ կամավորների միացյալ ուժերով ծավալված ռազմական հաղթական գործողությունների շնորհիվ գրավվեց Երեւանի բերդը, եւ Արեւելյան Հայաստանի մի զգալի մասը, ազատագրվելով խանական Պարսկաստանի լծից, անցավ Ռուսաստանի տիրապետության տակ:

Վիպական գործողությունները եւ դրանք իրականացնող հերոսները իրական են, ինչպես Արովյանը ինքն էլ ասել, «Հիմնովի» չեն: Բայց Արովյանի ոճի գլխավոր յուրահատկությունն այն է, որ նա չի բավարարվել պատկերվող իրականության մասին միայն ճիշտ պատկերացում տալով: Ամեն ինչ նա ենթարկել է իր գրողական սուբյեկտիվ կամքի թելադրանքին, ամեն ինչի մասին արտասայտվել է

բուռն զգացմունքայնությամբ՝ չթաքցնելով մեր ժողովրդի կրած դժոխային տառապանքների իրեն պատճառած խոր վիշտը, համակրանքներն ու հակակրանքները, Աղասու եւ ընկերների քաջագործությունների եւ երեսանի բերդի գրավման առիթով անախ ոգեւորությունը:

Այս իրողությունն արտաքուստ անհարիր է էպիկական սեռին, որտեղ հեղինակը պետք է որ աննկատ մնար՝ որպես դեպքերը կամ պատումը անկողմնակալ ներկայացնող, պասիվ շարադրող: Սակայն զգացմունքային այս բուռն ու անսասն հեղեղն էլ իր հետ բերել է որոշ նկատվող կամ աննշմարելի թերություններ, Մ. Նալբանդյանի ասած՝ որոշ «մոռացություններ»:

Վեպի կառույցը նույնպես ինքնատիպ է: Հառաջաբանը, երեք գլուխները, չափածո հատվածները եւ «Չանգի» հավելվածը վեպի բաղադրամասերն են: Թվում է, թե վիպական գործողությունները երեք գլուխներում պետք է զարգանային բնական ընթացքով, այսինքն՝ առաջին գլխում սկսված գործողությունները պետք է շարունակվեին երկրորդ եւ երրորդ գլուխներում: Սակայն առաջին գլխում պատկերված գործողությունները շարունակվում են հիմնականում երրորդ գլխում: Իսկ երկրորդ գլուխը, ուր ավելի շատ են քնարական շեղումներն ու չափածո հատվածները, կատարում է էական այլ դեր՝ մարմնավորելով հեղինակի գաղափարական ու գեղագիտական հիմնական հարցադրումների մի զգալի մասը:

Իր հիմնականում երրորդ գլխում: Իսկ երկրորդ գլուխը, ուր ավելի շատ են քնարական շեղումներն ու չափածո հատվածները, կատարում է էական այլ դեր՝ մարմնավորելով հեղինակի գաղափարական ու գեղագիտական հիմնական հարցադրումների մի զգալի մասը: Իր հիմնականում երրորդ գլխում: Իսկ երկրորդ գլուխը, ուր ավելի շատ են քնարական շեղումներն ու չափածո հատվածները, կատարում է էական այլ դեր՝ մարմնավորելով հեղինակի գաղափարական ու գեղագիտական հիմնական հարցադրումների մի զգալի մասը: Իր հիմնականում երրորդ գլխում: Իսկ երկրորդ գլուխը, ուր ավելի շատ են քնարական շեղումներն ու չափածո հատվածները, կատարում է էական այլ դեր՝ մարմնավորելով հեղինակի գաղափարական ու գեղագիտական հիմնական հարցադրումների մի զգալի մասը: Իր հիմնականում երրորդ գլխում: Իսկ երկրորդ գլուխը, ուր ավելի շատ են քնարական շեղումներն ու չափածո հատվածները, կատարում է էական այլ դեր՝ մարմնավորելով հեղինակի գաղափարական ու գեղագիտական հիմնական հարցադրումների մի զգալի մասը: Իր հիմնականում երրորդ գլխում: Իսկ երկրորդ գլուխը, ուր ավելի շատ են քնարական շեղումներն ու չափածո հատվածները, կատարում է էական այլ դեր՝ մարմնավորելով հեղինակի գաղափարական ու գեղագիտական հիմնական հարցադրումների մի զգալի մասը:

Արովյանական ոճի գլխավոր յուրահատկություններից մեկը հազվագյուտ անկեղծությունն է, ընթերցողին իրեն խոսակից կամ անմիջական գրուցակից դարձնելու բացառիկ արվեստը: Ինքն գիտակցել է, որ քնարական շեղումների պատճառով խախտվում է վիպական գործողության թույլատրելի կառույցը. «Լավ չի սկսած գործը թողալ ու էսպես քարոզ սախլ, ես էլ գիտեմ: Ամա սիրտս չի դիմանում, ես ի՞նչ անեմ»,- խոստովանել է նա: Սակայն հեղինակը, իր ահռելի սուբյեկտիվությամբ հանդերձ, հենց զգացել է իր խորհրդածություններով գործողության բուռն ընթացքից հեռանալը կամ ընթերցողին ծանձրացնելու վտանգը, վերադարձել է պարզապես հայցելով ընթերցողի ներողամտությունը:

Հեղինակային շեղումների զննությունը ցույց է տալիս, որ վեպի գաղափարական ծանրությունը զգալի մասով կենտրոնացած է շեղում համարվող այդ հատվածների վրա, որոնցով Արովյանն իրականացրել է ազգային համախմբման, դարավոր խեղճությունից հրաժարվելու եւ չարին դիմադրած կանգնելով հավերժության ճամփան բռնելու իր պատգամախոսությունը: Սրբազան հայրենիքին վերաբերող խնդիրները պահանջում են համազգային մոտեցմամբ լուծումներ:

Ինչո՞ւ է ողբում ինքնակերպավորված հայրենասեր հեղինակը եւ ի՞նչ է հորդորում հայության նոր սերունդներին. «Եթե մեք իրար քունակ անենք, իրար պայծառացնենք, շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա, մեզ տակով չի կարալ անիլ, ինչ թե օսմանցին յա պարսիկը»:

Հզոր է ազգային միասնությամբ համախմբված ժողովրդական տարերքը, բայց նրա մյուս վերջի՝ արդի խեղճության պատճառը մի կողմից տգետ հոգեւորականների հնազանդության քարոզներն են, մյուս կողմից՝ իրենց ազգի լուսավորիչ ու փրկիչ համարող անպատասխանատու մարդիկ, որ չեն կատարել իրենց պարտականությունները: Ահա ի՞նչ է գրել Խ. Արովյանը զգացմունքային անկեղծ մի պոռթկումի պահին. «Խախի սեղոնը չի, որ ճամփիցը դուս ա եկել, մեզ նման կարդացողի ոտները պետք ա ծառիցը կապած, ամսով սոված պահած»: Ավելին. նա այնքան է ողջամիտ, որ մեր դժբախտություններին ու կորուստներին մեջ մահմեդական թշնամիների հետ միասին նաեւ մեր մեղավորությունն է տեսնում: Արովյանի կարծիքով թեւ հիմնական մեղավորը Հայաստանը կողպատելու եկած թշնամիներն են՝ պարսիկ, օսմանցի, քուրդ, ղզլբաշ եւ այլակրոն ուրիշ տմարդի կողոպտիչներ, որոնց պատճառով է հեռավոր ժա-

մանակներից հայոց սուրբ հողը՝ մեր դրախտ երկիրը, դարձել «գողի ու ավազակի բնակարան», սակայն շատ հարցերում հենց ինքներս ենք մեղավոր անցյալի փառքերի զրկվելու, օտարին գերի դառնալու եւ այս ողորմելի վիճակին հասնելու համար: Պատճառն այն է, որ մենք շատ ենք հեռացել նախնիների քաջության ու արժանապատվության պատգամներից: Թշնամիներին կոխմագրակեցինք, մեր երկիրն ազատ կապեցինք, թեթ մեզ վարձքած չլինեին ավելորդ համբերության ու ստրկական հնազանդության: Այնինչ հայը բնականորեն պետք է ազատ լինի, եւ ունենա Աստծու կողմից իրեն տրված երկիրը պաշտպանելու արդար իրավունքը՝ նրա մարդկային առաջնահերթ պարտականությունը: Հայությունը երբեմն այդ պարտականությունն է թերացել կատարել, եւ հիմա անկախության հասնելու ճանապարհին մաքառումը նրա բնական պարտքն է եւ մարդկային արդար իրավունքը: «Էն մարդը, որ իր տանը, իր աշխարհքին մուղայիք չի կենա, իր հողի դաղոր չի գիտենա, մեռնի մեկ օր առաջ լավ ա, քան սաղ մնա»: Այսպես բնական ու հարազատորեն խոսում են հայ մարդիկ՝ «հարեանը հարեանի» կամ ընկերն ընկերոջ հետ: Սակայն այս արձակ կարգախոսն էլ չի բավարարել հեղինակին, եւ նա վեպի չափածո հատվածներից մեկով էլ (Արովյան Խ., Երկեր, Հայ դասական գրողների մատենաշար, Եր., 1984, էջ 120) ասում է սերունդներին պատգամել.

Թե մեկ ազգ իրան, որ ես աշխարքում Զի պահի, թշնամուն ինքը գերի կըլի, Աստված էլ նրան իր աչքից կքցի...

Նույն այս «սուբյեկտիվիզմին», ստեղծագործական «կամայականությանն» եւ ենթարկված մաե վիպական գործողություններին մասնակցող հերոսները, որոնք կերպավորված իրական պատմական անձնավորություններ են: Իսկ թե ինչպես են կերպավորված, կպարզաբանվի թե՛ Խ. Արովյանի եւ թե՛ նրա այս երկի գրական ուղղությանը քննությամբ: Միանգամայն բնական է հարցադրումը՝ գրական իր ուղղությամբ է ստեղծագործել Խ. Արովյանն առաջադրել, եւ իր մեթոդի սկզբունքներով է հյուսված «Վերջ Հայաստանին»:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱՅԱՆ Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՏԻՐՈՋ ՎԵՐՋԻՆ ԱՂՈՐԹՔԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 5, 17

Վաղ Վերածննդի եւ Բարձր Վերածննդի բազում նշանավոր նկարիչներ, մեծապես կարեւորելով «Գեթսեմանիի աղոթքի» ավետարանական պատմւմի պատմական, բարոյափոխական անհատական առաջնությունը, իրենց ժամանակաշրջաններին եւ սեփական ոճանտաճողությամբ բնորոշ կերպավորման մեթոդներով, գեղարվեստի հորինվածքային տարբեր հնարներով, թեմայի՝ իրենց աշխարհընկալմանը հարազատ արտահայտչամիջոցներով փորձել են վեր հանել «Աղոթքի» ոչ միայն բուն ասելիքի բարոյական, հոգեբանական, այլեւ՝ խորհրդաբանական եւ խորհրդանշական ենթատեքստերը: Այս առումով չափազանց հետաքրքիր է վաղ Վերածննդի նշանավոր վարպետ, Ֆլորենցիայի դպրոցի կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Անդրեա Մանտենյայի (1431- 1506) համանուն գործը, որը պահպանվում է Լոնդոնի ազգային թանգարանում:

Օգտվելով եվրոպական, առավելապես իտալական ազգային մշակույթում պահպանված-ավանդված խորհրդանշանների առատությունից՝ նկարիչը իր «Գեթսեմանիի աղոթքը» կտավի ողջ կոմպոզիցիան «համեմել» է սյուժեի իմաստային խորքայնությունը վեր հանող խորհրդանշանատրիբուտներով: Ինչպես հայտնի է, խորհրդանշաններն ուղեկցել են մարդուն վաղմջական ժամանակներից: Դեռեւս միջնադարում շատ ու շատ նկարիչների, քանակազորների, արհեստավորների համար իրենց ասելիքը տեղ հասցնելու գործում կարեւոր նշանակություն ունեին խորհրդանշանները: Մանտենյան դրանցից մեկն էր:

Սկսեմք նրանից, որ նկարիչ գեղապատկերի լանդշաֆտն ամբողջովին կառուցված է ասես ժայռակերտ տարածության վրա. ժայռը խորհրդանշան է հուսալիություն, ազնվություն, ուղղամտություն, ինչպես նաեւ՝ հաստատականություն, ամրություն, արիություն, ուժ: Նկարիչը ժայռերի կուտակումով շեշտում է մեր Տիրոջ՝ Իր առաքելության մեջ հենց հաստատական ու արի լինելու հանգամանքը: Խորհրդանշանների ընդհանրական համակարգում ժայռը նաեւ Տիրոջ այլաբանական անվանումներից

մեկն է: Յին Կտակարանում հաճախ կարող ենք հանդիպել նման համեմատության. «Տերն իմ վեճն է, ամրությունն ու փրկիչը» (Բ Թագավորություններ, ԻԲ 2), (Սաղմոս, Լ, 3-4 եւ այլն): Յիշենք նաեւ, որ քրիստոնեական եկեղեցու հիմնումը դրվեց Սիմոն առաքյալի վրա, ում Յիսուսն անվանակոչեց Պետրոս, որ հունարեն նշանակում է վեճ, քար (petros) կամ՝ ժայռ (petras)՝ գրության կերպով պայմանավորված:

Պատկերի կենտրոնում կրկին ժայռաբերկոր հիշեցնող քարի առջեւ, ծնրադիր, որ նշանակում է՝ խոնարհորեն, աղոթում է Տերը. «Յայր Իմ, եթե կարելի է, այս բաժակը թող Ինձնից հեռու անցնի»: Կարճ ժամանակով տեսած այս թուլությունից հետո Յիսուսը՝ Յոր կամքին եւ Իր առաքելությանը հնազանդ, շարունակում է. «բայց ոչ՝ ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես Դու»: Պատկերում Տիրոջ առջեւից սրընթաց փայտեղում են երկու նապաստակ, որով նկարիչը վերստին ընդգծում է Յիսուս Քրիստոսի թուլության ժամանակավոր լինելը, այսինքն՝ Յիսուսի աստվածային, այն է՝ հոգեւոր բնությունն իր իշխանությունն է հաստատում մարդկային՝ մարմնավորի վրա: Յայտնի է, որ խորհրդանշանների համակարգում նապաստակն ընկալվում է որպես վեճերոտության, վախի, մարմնավոր ցանկությունների նշան: Միջնադարյան արվեստում հաճախ կարելի է հանդիպել նաեւ նկարների, որտեղ Տիրամոր ոտքերի տակ պատկերված է նապաստակ, ինչը շեշտում է Կույսի հոգեւոր հաղթանակը մարմնական ցանկությունների վրա:

Կտավի աջ կողմում վերելից, հսկա ժայռերի ժայռահատ ստորոտում բերդապատ քաղաքն է՝ հոյակերտ շինություններով: Յալմաբար նկարիչը փորձել է պատկերել Պիղատոսի ապարանքի շքեղությունը, եւ դա նրան մեծապես հաջողվել է: Բերդապատերի տակ՝ կաճան հիշեցնող ճանապարհին, պատկերված են զինվորներ, որոնք մոտենում են Յիսուսին՝ Յուդայի ուղեկցությամբ, ում պարզած ձեռքն ուղղված է Ուսուցչի կողմը: Տիրոջ հայացքի ուղղությամբ՝ ամպախրձի վրա, կանգնած է հրեշտակների խումբը: Նրանցից մեկի ձեռքին խաչ է՝ նշան, որ Տերը խաչվելու է, մյուսի՝



նիզակ, որով խցովելու է, երրորդի՝ կոթողայուն, որը խորհրդանշան է երկրային ու երկնային կենսաուժերը, դիմացկունություն ու աստվածային սատարումը: Յիսուսից ներքեւ՝ ժայռապատի տակ, ուր խորքում են մտել երեք առաքյալները, կրկին նապաստակներ են վազվզում, որոնցով նկարիչն ընդգծում է աշակերտների՝ դեռեւս հոգեւոր տկարությունը, որն էլ պատճառ է դառնում նրանց քնով անցնելուն, չնայած Ուսուցիչը խնդրել էր զգոն լինել: Նրանց կողքից գետ է հոսում: Գետը խորհրդանշան է ողջերի ու մեռյալների աշխարհների բաժանման: Այն կամրջված է ուղղանկյուն քարի կտորով: Կամուրջը երկնքի ու երկրի, մարդու եւ Աստծո միավորման, մի վիճակից մյուսը փոխադրվելու նշան է, որը կատարվում է արդեն միմիայն հոգու միջոցով: Քարե կամրջի ծայրը հենված է կիսով չափ չորացած ծառի, իսկ ծառի ճյուղին՝ որպես Յայր Աստծո եւ զոհաբերվող Որդու նշան,

նստած է հավալուսնը: Ըստ ավանդության՝ հավալուսնը՝ ձկնկուլը, իր մեռած ձագերին կերակրել է սեփական արյամբ եւ հարություն տալով նրանց՝ ինքը մահացել է: Պատկերում առկա այս այլաբանությունը հենց ցուցում է հանուն մարդկության փրկության՝ Յիսուսի ինքնակամ զոհաբերումը:

Այս սքանչելի գործի մասին կարելի է ավելին ասել, խոսել կոմպոզիցիոն սքանչելի լուծումների, գույնի, գունաթույրերի անթերի ներդաշնակությունների, ֆիգուրների պլաստիկայի մասին, սակայն եղանակ էլ բավական է փաստելու Մանտենյայի մեծ ձգտումը՝ գեղարվեստի լեզվով եւ խորհրդանշանների միջոցով վեր հանելու Գեթսեմանիի աղոթքի ոչ միայն բարոյափոխականական, այլեւ Տիրոջ փրկագործության տիեզերաշունչ իմաստը:

Շարունակելի

Աստղիկ ՍՏԱՄԲՈՒՅԱՆ

ԴԱՐՁԻՐ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԴԵՄՔԸ



Սկիզբը՝ էջ 7

Աստված երբեք ոչ ոքի չար հոգի չի տվել, երբեք չի պատրաստել չարագործ, սխալական, մեղավոր, անբարոյական մարդիկ: Բոլորն էլ շատ լավ մարդիկ են, պարզապես տրվել են աշխարհի չարիքներին, որոնք փոխում են, աղավաղում մեր դեմքի գեղեցկությունը:

Ահա որպես քահանա՝ այս բանն էի փորձում անել. այդ երեխաներից յուրաքանչյուրի դեմքից հանել կեղծը եւ գտնել ճշմարիտը: Ու հավատացեք ինձ. մեծ ակնածանք զգացի... թեկուզ եւ պզուկներ ունեին, թեկուզ եւ ունեին երիտասարդական թեթեւամտություն ու անհասունություն: Երբ նրանցից

հեռացրի ամեն ինչ, որ տգեղ էր, աշխարհիկ տգեղությունը, բացականցեցի ինքս իմ մեջ. «Ինչ սրբեր կարող էին լինել այս երեխաները, ինչ բնորոշ սրբապատկերների համար»: Իսկապես, ինչպես տեսնում ես սուրբ Գեորգին, սրբուհի Պարասկեային, սուրբ Նիկողայոսին, սուրբ Դիմիտրիոսին, Բարսեղ Մեծին, սրբուհի Մարինային, այդպես էլ այդ երեխաները եւ յուրաքանչյուր մարդ կարող է ունենալ սուրբ կերպարանք, եթե նրանց վրայից հանես աշխարհիկ տգեղությունը:

Սակայն այնտեղ, ուր հասել ենք, տեսնելով մեր այնփոխված դեմքն ու անճանաչելի անհատականությունը, ասում ենք. «Շատ հեռու ենք այդ բանից»: Մտածում ես. ինչպիսին է մեզ ստեղծում Աստված, ու ինչպիսին ենք դառնում մենք, ինչպես ենք փչանում, աղավաղվում, շեղվում, ո՞ր են կորչում այդ մանկական անմեղությունը, գեղեցկությունը, պարզությունը, մաքրությունը: Մեր միտքն ամբողջապես դեպի չարն է գնում: Մի բան ես ասում, դիմացինը ներքին իմաստներ է գտնում, մի բան ես ասում, մի ուրիշ բան է հասկանում, մի բան ես ասում, նրա միտքն այլուր է գնում: Մեղավոր չե՞ նա, այդպես է սովորել: Աշխարհն է մեզ այդպիսին դարձրել, մեր ժամանակաշրջանը, մտածելակերպը ու հատկապես այս աշխարհի իշխանը՝ չարը, որ նոր բարոյականություն է ստեղծում այս աշխարհի համար:

Չմոռանանք, սակայն, որ ամեն ինչի վերելում կանգնած է Աստված: Նա է ամենայնի Տերը: Պարզապես Նրան կողքի ենք հրել, այդ պատճառով չարը, որ խավարի իշխանն է, այլակերպել է մեր ժամանակաշրջանի մտածելակերպն ու բարոյական արժեքները: Փչացել ենք մենք ու փչացնում

ենք նաեւ մեր երեխաներին դեռ փոքր տարիքից: Ջարդում, փշրում ենք նրանց:

Չգիտեմ՝ արդյոք ունես երեխա, չգիտեմ՝ արդյոք դու էլ երեխա ես, չգիտեմ՝ արդյոք քո դեմքն էլ այնքան գեղեցիկ է, ինչպես մետրոյում հանդիպածս երեխաների դեմքերը վերականգնումից հետո, երբ տակից երեսաց յուրաքանչյուրի գեղեցիկ հոգին: Չգիտեմ՝ ինչպիսին է քո դեմքը, ինչքան ժամանակ ես ապրել մանկական անմեղությունը, քանի տարի է անցել այն ժամանակվանից, երբ առաջին անգամ լսեցիր վատ խոսքեր, անեկոյտներ, ակնարկներ, եւ կամաց-կամաց ծածկվեց հոգուդ այդ գեղեցկությունն ու կորավ:

Սիրելիներս, շատ կարեւոր է՝ ինչպես է մարդ ապրում, ում հետ է շփվում, ովքեր են նրա ընկերները, ինչպիսին է նրա կյանքը, որն է նրա պայքարը: Մարդը փոխվում է: Բնական է, որ պետք է փոխվի, երբ մեծանում է: Չի կարող դեմքդ միշտ մանկական լինել: Կմեծանաս, կփոխվես, հայացքդ կլրջանա, մի փոքր կխստանա, ավելի զուսպ կդառնա, սուր, ծանր: Չեմ խոսում այս փոփոխության մասին: Այն, ինչ որ չպետք է կորցնես երբեք, հոգու անմեղությունն է: Սա ամենագեղեցիկ բանն է. մի կորցրեք անմեղությունը: Որքան էլ տարիներ անցնեն, կնճիռներ ունենաս թե ոչ, պզուկներ ունենաս թե ոչ, դեմքդ գեղեցիկ լինի ամազորների կազմերին հայտնվելու համար թե անտես լինի այս աշխարհի չափանիշներով, հիշիր, որ անմեղությունն ամենագեղեցիկ զարդն է. միշտ պահիր հոգուդ մաքրությունը, բարոյությունը, սերը: Այս ամենն արտացոլվում է դեմքի վրա, եւ ինչքան էլ ժամանակ անցնի, երիտասարդ լինես թե ծեր, այն երբեք չես կորցնի:

Միշտ եղիր գեղեցիկ, միշտ ունեցիր գեղեցիկ դեմք: Եվ գեղեցիկ է ոչ թե հարդարված, այլ բարոյություն արտահայտող դեմքը: Եկեղեցուն ասում ենք, որ բոլորս էլ շատ գեղեցիկ ենք լինում, երբ թույլ ենք տալիս, որ Աստծու

շնորհը, որ մեր մեջ է մտնում Սուրբ Սկրտությունը, արտահայտվի մեր դեմքի վրա:

Չգտնեմ ես գեղեցիկ երեխա: Չասես՝ ոչ, որովհետեւ կփոխվանես, եթե հիշեցնես քեզ՝ այսօր առավոտյան ինչքան ես նայել հայելու մեջ՝ մտահոգվելով՝ ինչպես են երեւում աչքերդ, շուրթերդ, դեմքդ, մազերդ, ինչքան ես աջ ու ձախ թեքվել, զննել կիսադեմդ, մտածել՝ արդյոք ինչ կարծիքի եմ քո արտաքինի մասին ուրիշները, արդյոք գեղեցիկ ես, դուրեկան, եւ թե ինչքան դանդաղ ես հաճախ հագնվում՝ չկարողանալով ընտրել՝ որ զգեստն է ամենալավը եւ հարմարը տվյալ առիթի համար:

Շարունակելի

Թարգմանությունը հունարենից՝ Տաթևիկ ՍԵՓՈՒՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅՄԱՆՈՒՄ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Յիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Յայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624

խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 3.10.2018 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ